

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼՍՈՓՈՍՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (16)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼՍՈՓՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOSOPHY, PSYCHOLOGY»
«BANBER YEREVANI HAMALSARANI. PHILOSOPHY, PSYCHOLOGY»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ավանեսյան Հ. Ս., Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Բաղդասարյան Ա. Ս.,
Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Զարթարյան Ս. Ա., Խաչատրյան Ն. Գ.,
Հարությունյան Է. Ա. (*պատասխ. խմբագիր*), Հովակիմյան Ա. Է. (*պատասխ.
քարտուղար*), Մանասյան Ա. Ս., Շահվերդյան Գ. Ս., Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аванесян Г. М., Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Арутюнян Э. А.**
(*ответ. редактор*), **Багдасарян А. С., Гончар Н. А.** (*зам. главного редактора*),
Закарян С. А., Манасян А. С., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), **Симонян А. Г.,**
Хачатрян Н. Г., Шавердян Г. М.

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Avanesyan H. M., Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), **Baghdasaryan A. S.,**
Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), **Harutyunyan E. A.** (*Managing Editor*),
Hovakimyan A. E. (*Executive Secretary*), **Khachatryan N. G., Manasyan A. S.,**
Shahverdyan G. M., Simonyan A. H., Zakaryan S. A.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԴԻՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴԵՍՈՒԹՅԱՆ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Մարդն ըստ էության իր պատմությունն է, իր անցած ճանապարհը, իր կերտած կենսագրությունը: Անցած կենսական ուղին իմաստ է հաղորդում մարդու անցյալին, բովանդակություն՝ ներկային և ուրվագիծ՝ ապագային: Մարդկային պատմությունը կերտվել և կերտվում է միայն այլ մարդկանց պատմությունների հետ ունեցած խաչավորումների, զուգադրումների արդյունքում: Ուստի պատմությամբ հարուստ մարդը դատապարտված է ունենալու նաև այլ մարդկանց հետ հարաբերվելու, սոցիալական կապեր ստեղծելու ունակություններ, սոցիոմշակութային այնպիսի կառուցվածքաստեղծ մեխանիզմներ, որոնք արդարացնում են նրա «սոցիալական էակ» լինելու իրավունքը: Նման սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ մի մեխանիզմ էլ մարդու սոցիալական դիմակն է, նրա անձնային հատկանիշը: Հենց դիմային, միջանձնային շփման շնորհիվ է սկսվում մարդու՝ բնական վիճակից սոցիալական վիճակին անցումը¹: Ընդ որում, եթե բնական վիճակում մարդը «մերկ է» բնության առաջ, ապա սոցիալական վիճակում նա մշտապես կրում է որևէ սոցիալական հանդերձանք՝ դիմակ, որի միջոցով էլ մասնակցում է հանրային կյանքին: Ինչպես նկատում է Յունգը, սոցիալական դիմակը գործառության ճանաչողություն է, որը ձևավորվում է մարդու սոցիալական ադապտացման պահանջումները բավարարելու նպատակով, և հետևաբար այն նույնական չէ մարդու անհատականությանը²: Սոցիոմշակութային տարածությունում մարդու կենսագործունեությունը մշտապես ուղեկցվում է սոցիալական դիմակների անվերջ հաջորդափոխությամբ: Պատմական, սոցիոմշակութային, քաղաքակրթական տարբեր միջավայրերում ամեն մարդ ինքնակամ կամ հարկադրաբար խաղում է որոշակի սոցիալական դերեր: Ինչպես տարբեր սոցիոմշակութային արժեհամակարգեր ունեցող մարդիկ կարող են կրել տարբեր սոցիալական դիմակներ, այնպես էլ միևնույն մարդը իր կյանքի տարբեր հատվածներում և տարբեր սոցիոմշակութային միջավայրերում կարող է խաղալ սոցիալական տարբեր դե-

¹ Տե՛ս **Марков Б. А.** Антропология интимного // **Слотердайт П.** Сферы. Т. 1, СПб., 2005, էջ 11:

² Տե՛ս **Jung Carl G.**, Psychological types, Princeton University Press, 1974, էջ 303-326:

րեր: Սակայն սոցիալական դիմակների հաջորդափոխության հորձանուտում գտնվող մարդու մեջ մի բան մնում է անփոփոխ. դա նրա դեմքն է: Դեմքը մարդու կենսական և սոցիալական պատմության իրական մատյանն է: Ըստ էության մարդու կյանքը դաջվում է նրա դեմքի վրա, և եթե մարդու աչքերը նրա հոգու հայելին են, ապա դեմքը նրա պատմականության կողն է: Ամեն մարդու կերտած կենսագրությունը անկրկնելի է, ուստի նրա կենսագրության մատյանը՝ դեմքը, եզակի է, իսկ սոցիոմշակութային իրականությունում կողմնորոշվելու դիմակները՝ բազում: Սակայն, միևնույն ժամանակ, դեմքն առանց դիմակի բովանդակագույր է, քանի որ դեմքը բովանդակություն և կերպ է ստանում սոցիալական կյանքի ընթացքում խաղացվող որևէ դիմակի՝ դեմքին սերտաձելու ընթացքում: Այսինքն՝ դիմակը ինչ-որ իմաստով կերտում է նաև որոշակի դեմք, քանի որ սոցիալական հարաբերությունների հաստատման ընթացքում է միայն ի հայտ գալիս մարդու դեմքը կամ այլ կերպ՝ անհատականությունը: Կարճ ասած՝ դիմակը մարդու անձնավորությունն արտահայտող միավորն է, դեմքը՝ նրա անհատականությունը: Մարդն առանց դեմքի չունի անհատականություն, իսկ առանց դիմակի չի կարող ունենալ նաև անձնավորություն:

Ժամանակակից աշխարհի սոցիոմշակութային առանձնահատկություններից մեկն այն է, որ անհատը դիտվում է որպես անհատականություն ունեցող սոցիալական էակ: Ինչպես այս կապակցությամբ նկատում է Բաումանը, այլևս բավական չէ ծնվել որպես անհատ. մարդն իր կենսագործունեության ընթացքում պետք է իրացվի որպես անհատ, այսինքն՝ պետք է ձեռք բերի, բացահայտի կամ հայտնաբերի իր անհատականությունը: Ի տարբերություն սոցիոմշակութային այլ դարաշրջանների՝ ժամանակակից աշխարհում անհատականությունը կամ այլ կերպ՝ մարդու ինքնանույնականացումը «տրված» լինելու կարգավիճակից փոխակերպվում է «գտնված» կամ «կերտված» լինելու կարգավիճակի³. Ինդիք, որը պետք է իրագործվի ամեն մարդու անցած կենսական ճանապարհի ընթացքում: Սակայն, ժամանակակից աշխարհակարգին բնորոշ անհատի՝ անհատականության կերտման, դեմքի ձևավորման միտումը դեմ է առնում հետարդիական սոցիոմշակութային տարածության ներքին գործառական առանձնահատկություններից բխող մեկ այլ միտման՝ հասարակության զանգվածացման, ամբոխայնացման գործընթացներին: Հետարդիականության համատեքստում մի կողմից մարդը ստեղծում, ձեռք է բերում իր անհատականությունը, իր դեմքին պատկերում է որոշակի կենսիմաստային դիմագծեր, մյուս կողմից՝ ենթարկվում է անդեմություն, միաչափություն պարտադրող զանգվածի ազդեցությանը:

Հետարդիականության սոցիոմշակութային բնորոշ այն գաղափարը, որ անհատը պետք է իրացնի իր անհատականությունը, ձևավորվել է ո-

³ Տե՛ս **Бауман З.** Текущая современность. СПб., 2008, էջ 39:

րոշակի պատմական, քաղաքակրթական, մշակութային զարգացումների հաղթահարմամբ: Մարքսյան ըմբռնմամբ՝ անձնային կախվածությունների մինչարդյունաբերական հասարակություններում մարդը սոցիալական դերակատարումներին վերաբերվել է որպես տրվածություն, որպես իրենից անկախ սոցիալական ճակատագիր: Այսինքն՝ մարդուն բաժին ընկած սոցիալական դերերն ընկալվել են որպես ինչ-որ գերբնական, այնկողմնային ուժերի կողմից նախասահմանվածություններ, որոնք պետք է ապրվեն ու հաղթահարվեն: Օրինակ՝ անտիկ շրջանում ստրուկն ու ստրկատերը, միջնադարում ճորտն ու ավատատերը իրենց սոցիոմշակութային դերը ընկալել են որպես սահմանված սոցիալական դերակատարում, որպես նախասահմանված կարգավիճակ և մեծ իմաստով ենթարկվել են սոցիալական արդարության այդ ուղղահայացի մեջ իրենց բաժին հասած ճակատագրին: Այսինքն՝ անձնային կախվածության հարաբերությունների դարաշրջանում (նախնադարյան, ստրկատիրական, ավատատիրական հասարակություններում) դիմակը և դեմքը միմյանցից սահմանազատված չէին: Մարդու կենսագործունեությունը ընդհանուր առմամբ կախված էր իր դիմակի՝ սոցիալական այս կամ այն դասին պատկանելությունից և վերջինիս գործառութային առանձնահատկություններից: Փաստորեն ճորտը կախյալ էր ոչ թե իր տիրոջից, այլ «ճորտի» դիմակից, որը նա կրում էր գոյության ողջ ընթացքում՝ ծնունդից մինչև մահ: Նա կախյալ էր նաև իրեն բաժին հասած դիմակի՝ սոցիալական վարքի ընդունված նորմերից: Ուստի միջնադարյան հանրույթը ապրում էր ոչ միայն մարդուց դուրս՝ արտաքին աշխարհում, այլ նաև ենթագիտակցական մակարդակում՝ մարդու ներսում: Մարդն անազատ էր իր իսկ գիտակցության շրջանակներում, նա ենթարկվում էր իր դիմակին, վերջինիս կենսագործունեության ապահովողն ու հպատակն էր: Միջնադարյան սոցիալական հանրույթը «օգտագործում էր» դիմակների տրվածության սրբացման կոռ մարտավարությունը սոցիալական հարաբերությունների «ստատուս քվոն» պահպանելու համար, ինչով միջնադարյան արևմտյան հասարակությունը բավարարում էր իր ինքնապահպանման և վերարտադրման անհրաժեշտության բնական պահանջմունքը:

Սակայն 14-15-րդ դարերից սկսած՝ քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական և մշակութային որոշ փոխակերպումների հետևանքով Արևմտյան Եվրոպայում սկիզբ է առնում մարդու՝ «սրբացված» դիմակներից ազատման գործընթացը: Հումանիստները, իսկ հետագայում նաև լուսավորիչները դնում են սոցիումի պարտադրական դիմակներից մարդու ազատագրման խնդիր: Արդյունքում իրեն բաժին հասած սոցիալական դիմակին մարդն աստիճանաբար սկսում է վերաբերվել ոչ թե որպես ինչ-որ գերբնական ուժերի կողմից նախասահմանված ճակատագրի, այլ որպես կենսագործելու, ինքնիրացվելու համար անհրաժեշտ սոցիոմշակութային գործոնի, որի կերպն ու բովանդակու-

յունը կարող է միայն ինքը ընտրել: Այլ կերպ ասած՝ Վերածննդի ժամանակից սկսած մարդը դիտվում է որպես դեմք ունեցող սուբյեկտ, այսինքն՝ որպես անհատ: Մկսվում է մարդու անհատացման, մարդու դեմքի բացահայտման գործընթացը: Ինչպես տեղին նկատում է Ֆրոմը. «Մարդը դեն նետեց բնության լուծը, և ինքը դարձավ նրա տերը... արտաքին պարտադրանքի օտարումը թվում էր ոչ միայն անհրաժեշտ, այլ նաև բավարար պայման բաղձալի նպատակին՝ յուրաքանչյուր մարդու ազատությանը հասնելու համար»⁴: Ըստ էության, մարդը ազատագրվում էր հենց սոցիալական դիմակի անխուսափելիության լծից, դեն նետում հպատակի պարտադրական դիմակն ու արդյունաբերական քաղաքակրթություն մտնում արդեն քաղաքացու, ինքն իր տերը լինելու նոր դիմակով:

Հպատակի դիմակից քաղաքացու դիմակին անցումը, սակայն, հեշտությամբ չտրվեց արևմտյան քաղաքակրթական տարածքում կենսագործող մարդուն: Բանն այն է, որ մարդկանց մեծ մասը, գտնվելով քաղաքակրթական կենտրոններից՝ քաղաքներից, զգալի հեռավորության վրա, հնարավորություն չունեին տեսնելու և հետո արդեն հասկանալու, որ իրեն բաժին հասած «նախասահմանված» ճակատագրից զատ կարող է լինել նաև կենսագործունեության մեկ այլ տրամաբանություն: Բայց արդյունաբերական քաղաքակրթության ծավալմանը զուգահեռ՝ սկսվեց լայն զանգվածների մտավոր և ֆիզիկական ունակությունների «տարածական կենտրոնացումը», ինչի շնորհիվ շփվելով իր սոցիալական ճակատագիրը կիսող բախտակիցների հետ՝ զանգվածի մարդը աստիճանաբար ձերբազատվում է մինչարդյունաբերական քաղաքակրթության մտածողությանը բնորոշ կրավորականությունից: Տրվելով հավաքական ուժի գրավչությանը՝ մարդու քաղաքակրթական-մարդաբանական այս նոր տեսակը աստիճանաբար ձեռք է բերում սեփական իրավունքները բարձրաձայնելու և պաշտպանելու համարձակություն և հավակնություն: Ձևավորվում է «զանգվածների հասարակությունը», որն այլևս չէր կարող գործառել սոցիալական դերերի ու դերակատարումների բաշխվածության՝ երբեմնի հաստատված սոցիոմշակութային ընթացակարգով: Արևմտյան քաղաքակրթական տարածքում ամբոխի հայտնվելը փոխակերպումների է ենթարկում նաև մարդու ներաշխարհը, սեփական Ես-ի և անհատականության գնահատման չափորոշիչները՝ առաջադրելով սոցիալական դիմավորված աշխարհի հետ փոխհարաբերությունների նոր կարգ և գերակայությունների նոր սանդղակ:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադարձությունների հորձանուտում հայտնված ամբոխը աստիճանաբար գրավում է արդյունաբերական քաղաքակրթության սոցիոմշակութային ողջ տարածությունը, և նրա քանակական ցուցիչը աստիճանաբար տեղը զիջում է որա-

⁴ Фромм Э. Бегство от свободы. М., 2009, էջ 12:

կական որոշակիությանը: Այսինքն՝ մարդկային զանգվածի քանակական փոխակերպումները վերաճում են սոցիոմշակութային որակական փոխակերպումների, աճում է ամբոխի կլանող «ձգողականությունը», և այն, ինչ ժամանակին ընկալվում էր որպես քանակ, այժմ ընկալվում է որպես որակ: Ամբոխը դառնում է անհատականությունը կորցրած մարդու սոցիալական ընդհանուր որակ, որտեղ ոչ ոք որևէ էութենական հատկանիշով չի տարբերվում ուրիշներից, անդեմ «ընդհանուր տեսակից»⁵: Այլ կերպ ասած՝ ամբոխի քանակական աճը հանգեցնում է ամբոխի որակական հատկությունների փոխակերպմանը, որի հետևանքով նա աստիճանաբար դառնում է սոցիոմշակութային բոլոր տեսակի հարաբերությունների կրողն ու պատվիրատուն:

Ամբոխի քանակական աճի և սոցիոմշակութային տարածություններին տիրելու սոցիալ-հոգեբանական առաջին հետևանքը ամբոխի կազմում հայտնված մարդկանց ներքին հուզական, հոգեբանական տրամադրվածությունների փոխակերպումն է: Գիտակից անձը տարրալուծվում է ամբոխի մեջ, նրա հույզերն ու վարքը ամբողջությամբ ենթարկվում, ստորադասվում են ամբոխի հուզական տարածությանը և ստանում են մեկ ուղղվածություն, ուղղվածություն առ ամբոխը, ընդհանուրը, Մենք-ը⁶: Սոցիալական այս նոր կազմակերպման մեջ առավելապես տիրում է հուզական-հոգեբանական ընդհանուր տրամադրվածություն և հոտային-բնագոյային հակվածություն (Ֆրոյդ): Տարրալուծվելով ամբոխի մեջ՝ մարդը կորցնում է սեփական Ես-ի զգացողությունը և ձուլվում ամբոխի Մենք-ին: Կարճ ասած՝ ամեն մի առանձին մարդու ներաշխարհը ամբոխի կազմում վերածվում է ընդհանուրի ներաշխարհի. Ես-ը դառնում է Մենք, Մենք-ը՝ Ես: Այս առնչությամբ սոցիալական հոգեբանության նախահայրերից մեկը՝ Միգելեն, իրավացիորեն նկատում է, որ ամբոխը՝ որպես առանձին միավորների հավաքական ամբողջականություն, արտահայտում է բազում առանձին մարդկանց նույնականացումը մեկ ընդհանրական անհատի (ամբոխի) հետ⁷: Որպես հետևանք՝ իր Ես-ը կորցրած մարդու ինքնագիտակցականը ենթարկվում է ժամանակավոր փոխակերպումների: «Կուլեկտիվ փայտքեի կողմից կլանված մարդը դառնում է նրա մասնիկը: Դառնալով ամբոխի մեջ մեկ ատոմ՝ մարդը կորցնում է տրամաբանական մտածողության ընդունակությունը, մտքի հստակ ու կուռ կարգավորվածությունը, ընդհատվում է նրա կապը աշխարհի ներդաշնակ հիմքի հետ, նրա բանականությունը խավարում է: Պարզունակացումը կամ, եթե կուզեք՝ կուլեկտիվացումը ստրկացնում է մարդկային էակի գոյությունը, այն դարձնում զանգվածային գոյություն»⁸, որի պայմաններում

⁵ Мак-Люэн М. Галактика Гутенберга. Киев, 2003, с. 356–358.

⁶ Лебон Г. Психология толп. М., 1998, էջ 131:

⁷ Տե՛ս Սигеле С. Преступная толпа. М., 1998, էջ 32:

⁸ Բ. Հավմաշ, Ջրհոսը, թարգմ. Է. Աթայանի, տե՛ս Է. Աթայան, Հոգի և ազատություն, Եր., 2005, էջ 573:

այլևս հնարավոր չէ տարբերակել մտքերի, գաղափարների, Ես-երի իսկական կրողներին: Մեկի Ես-ը դառնում է բոլորինը, մեկի կամքը (սովորաբար ամբոխին առաջնորդողի կամքը)՝ բոլորի հավատամքը, կարծես իրապես գործում է «հոգի՝ երեք հոգու համար» (Օսբերթ) սկզբունքը:

Ընդհանուր հուզական դաշտի ձևավորման հետևանքով տեղի է ունենում ամբոխի ազդեցության տիրություն հայտնված մարդու երկրորդ՝ սոցիալ-մարդաբանական փոխակերպումը. ամբոխի մարդը կորցնում է իր դեմքը, անհատականությունը: Անընդունակ լինելով անգամ տարրական վերլուծության՝ ամբոխի անգիտակցականն ինքն իրեն մշտապես շփոթում է մեկ ուրիշի հետ, ընդունում է նրա կարծիքը, ապրում նրա կյանքով, մինչդեռ «կիսաքայքայված ինքնագիտակցությունը» (Հավմաշ) ճախրում է բնագոյների պղտոր խորքերում: Սակայն անգամ «կիսաքայքայված ինքնագիտակցության» ազդեցության տակ մարդը որոշակի սոցիալական հարաբերություններ է հաստատում և իրականացնում է սոցիոմշակութային գործառույթներ: Թվում է, թե առանց սեփական Ես-ի գիտակցաբար մղման մարդը ի վիճակի չէ սոցիոմշակութային որևէ գործունեություն ծավալելու: Սակայն այս դեպքում արդեն ամբոխի մարդու մոտ գործում է այսպես կոչված «նմանակման» սոցիալական բնագոր (Թարդ): Ֆրանսիացի մտածող Թարդը, հետևելով այս տրամաբանությանը, անգամ հայտարարում է, որ «մարդկային էությունը ամենուրեք միատեսակ է»⁹, քանի որ սոցիալական բոլոր հարաբերություններում գործում է սոցիալականության սուբյեկտների՝ մեկը մյուսին «նմանակելու» սկզբունքը: Մերունդները նմանակում են իրենց նախնիներին, զավակները՝ ծնողներին, ժողովուրդները՝ իշխանություններին, և այսպես շարունակ: Սակայն խնդիրն այն է, որ ամբոխի սոցիոմշակութային տարածությունում նմանակման սկզբունքի գործառելիությունն ավելի արդյունավետորեն է իրացվում, քանզի նեղանում են սոցիալական հարաբերությունների ձևավորման և շփման սահմանները, ընդ որում՝ այնքան են նեղանում, որ կարծես թե կորչում է սոցիալական հարաբերությունների հաստատման համար անհրաժեշտ տարածական նվազագույն հեռավորությունը: Այս դեպքում արդեն սոցիալական հարաբերությունների հաստատումը տեղի է ունենում ինքնաբերաբար կերպով, մարդու գիտակցականից անկախ, երբ սոցիալականը կարծես իր տեղը զիջում է հոգեբանականին, գիտակցականը՝ անգիտակցականին: Ամբոխին պատկանող մարդը կարծես ձուլվում է ամբոխի մարդկային զանգվածին¹⁰: Բանն այն է, որ

⁹ **Тард Г.** Законы подражания. СПб., 1992, с. 80.

¹⁰ Քննարկվող երևույթը որոշ իմաստով նման է հին հնդկական ծիսական արարողակարգերից մեկին, որտեղ մարդիկ ինքնամոռացության էին մատնվում կրոնական-հոգեբանական ներազդման հետևանքով և նետվում էին «ջագերնատու» կոչվող ծիսական մեծ անիվի տակ, որը խորհրդանշում էր մարդկանց՝ մի ընդհանուր զանգված-մարմնի մեջ լուծվելու հին հնդկական հավատքը:

կողեկտիվ վիճակում նա (ամբոխը) սկսում է հավատալ ոչ թե նախկինում իր իսկ դավանածին, այլ նրան, ինչին հավատում են բոլորն ընդհանրապես¹¹: Այս իմաստով նմանակումն ամբոխում բռնկված համաճարակի պես վարակում է մարդկանց հոգիներն ու մտքերը, մարդկանց դարձնում է մի ընդհանուր Ես-ի կրողներ, որոնք ունեն մի հոգի, բայց տարբեր մտքեր, մի «ենթագիտակցական», բայց տարբեր «գիտակցականներ»:

Հետաքրքրականն այն է, որ քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ՝ աստիճանաբար «նմանակումը» կրում է ռացիոնալացված և անձնավորված բնույթ, քանզի ներքին մի անբացատրելի մղումով մարդն արդեն ինքնակամ է տրվում ամբոխի տարրալուծող ազդեցությանը: Ամբոխի մեջ տարրալուծվելու գիտակցական այդ մղումը Թարդը կոչում է «բնագոյային ծուլություն»¹²: Խնդիրն այն է, որ մարդը, իր սոցիալական նախասկզբի համաձայն, մշտապես գտնվում է ամբողջի կողմից լքված, օտարված լինելու հոգեբանական տագնապի մեջ: Նա, ով չի մասնակցում այդ «մեծ խաղին», որին բոլորն են մասնակից, կանգնում է մենության մեջ հայտնվելու իրական վտանգի առաջ: Մրան զուգահեռ՝ բոլորի կողմից ապրվող նույնատիպ կենսակերպն ու իրականության մեջ կողմնորոշվելու բոլորի կողմից ընդունելի մարտավարությունները վերջիններիս միակ բացարձակ ճշմարտություն կոչվելու իրավունք են վերապահում: Առանձին մարդուց կենսական մեծ եռանդ ու ջանքեր կարող են պահանջվել ամբողջի կամքին հակադրվելու կամ անգամ ամբողջի կենսադիրքորոշումը կասկածի ենթարկելու համար, մինչդեռ առօրեականությանը կույ գնացած կլանված մարդը շատ հազվադեպ կարող է դիմել նման զոհողությունների և շատ հաճախ ինքնակամ է տրվում ամբոխի ներագդմանն ու ընդունում վերջինիս կողմից մատուցվող իրականության միակ հնարավոր լինելը: Այդպես կորչում է ստեղծագործելու, ինչ-որ նոր կեցութակերպ արարելու կամ ինչ-որ մեկ Ուրիշը լինելու վտանգավոր անհրաժեշտությունը:

Լուծվելով ամբոխի հուզական տարածությունում՝ մարդը կորցնում է իր եզակիական դեմքը, դառնում է անանուն ու անդեմ զանգված, ինչն էլ հանգեցնում է ամբոխի ազդեցության տիրություն հայտնված մարդու երրորդ՝ սոցիալ-հոգեբանական փոխակերպմանը: Եթե ամբոխի մարդը գործում է այնպես, ինչպես նրան դրդում է զանգվածային (ամբոխային) գիտակցությունը¹³, ապա նա ի վերջո կորցնում է սոցիալական իրականությունում կողմնորոշվելու գործառական ազատությունը, դադարում է ինքնուրույն մտածել, նրա ինքնագիտակցությունը մարում է, որի հետևանքով ամբոխի մարդու կենսագործունեությունը թելադրվում է զուտ անգիտակցական ու ենթագիտակցա-

¹¹ Տե՛ս **Բ. Հավմաշ**, նշվ. աշխ., էջ 567:

¹² **Тард Г.**, նշվ. աշխ., էջ 51:

¹³ Տե՛ս **Найдорф М.** Очерки современной массовой культуры. Одесса, 2013, էջ 221:

կան ազդակներով: Կորցնելով սեփական Ես-ին վայել սոցիոմշակութային իրականության կերտման գործառական ազատությունը՝ ամբոխի մարդը զրկվում է նաև իր արարքների և դրանց հետևանքների նկատմամբ պատասխանատվության զգացումից: Անպատասխանատվությունը վերածվում է ամբոխի մարդու հիմնային որակի: Բանն այն է, որ ամբոխի տիրույթում հայտնված և նրան ենթակա մարդը կորցնում է իր գործողությունների համար պատասխանատվություն կրելու անհրաժեշտ ինքնավարությունը: Այս առնչությամբ Յասպերսը իրավացիորեն նկատում է, որ «ամեն մի առանձին մարդ «ամբոխ» կոչվող սոցիալական հսկայական մեքենայի գուտ առանձին մի պտուտակն է, որտեղ բոլորն են մասնակցում որոշում կայացնելու գործընթացներին, սակայն ոչ մեկն էլ իրապես ոչինչ չի որոշում»¹⁴: Պարզապես բոլորը ենթարկվում են ընդհանուրի կարծիքին կամ, այլ կերպ, «հանրային կարծիքին», որը, սակայն, երբեք իրապես արտահայտելի կամ ուրվագծելի չէ, քանի որ չունի կոնկրետ հասցեատեր, ուստի նաև՝ կոնկրետ պատասխանատու:

Պատասխանատվության կորուստը ինքնին սոցիոմշակութային լուրջ վտանգներ պարունակող երևույթ է: Բանն այն է, որ ամբոխի կազմավորումը կարող է իսկապես պայմանավորված լինել ինչ-որ քաղաքական իրադարձության կամ սոցիալական կարևորություն ունեցող գործընթացի նկատմամբ մարդկանց հետաքրքրվածությամբ: Մակայն ամբոխի մարդու հետաքրքրվածությունը շատ հազվադեպ կարող է վերածվել կառուցողական գործելակերպի: Խնդիրն այն է, որ եթե գիտակից մարդը կարող է նկատել սոցիալ-քաղաքական կամ սոցիալ-տնտեսական այս կամ այն գործընթացի անիմաստ կամ անարդար լինելը և գիտակցաբար ընդվզել ետնաբեմից սոցիալական կյանք կազմակերպող տիկնիկավարների անարդարությունների ու անօրինությունների դեմ, ապա ամբոխի մարդու ընդվզումը ոչ թե գիտակցական, այլ գուտ հուզական բնույթ է կրում: Գտնվելով հույզերի ազդեցության տակ՝ ամբոխի մարդը կարող է դրսևորել ծայրահեղական վարք կամ ընկղմվել անտարբերության թմբիկի մեջ: Երկու դեպքում էլ, սակայն, նա չի զգում իր գործողությունների հետևանքների պատասխանատվությունը, քանի որ ինքն այլևս պատկանում է ոչ թե իրեն, այլ ամբոխին ու ամբոխային տրամադրություններին:

Արդյունաբերական քաղաքակրթությունից հետարդյունաբերականի անցնելուն զուգահեռ փոխակերպվում է ամբոխի ինչպես կառուցվածքային, այնպես էլ ձևաբանական բովանդակությունը: Ժամանակակից աշխարհում ամբոխը գործառում է ցրված կերպով, այսինքն՝ ամբոխի ձևավորման, մարդու ներաշխարհի ամբոխայնացման համար տարածական կուտակվածությունը այլևս անհրաժեշտ պայման չէ: Բանն այն է, որ հետարդյունաբերական քաղաքակրթության առանձ-

¹⁴ Ясперс К. Власть массы // Бодрийяр Ж., Ясперс К. Призрак толпы. М., 2014, с. 81–82.

նահատկություններից մեկն էլ հասարակական կյանքի կազմակերպման գործընթացներում տեղեկատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության ծավալումն է: Ժամանակակից աշխարհը հագեցած է տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներով, որոնք նպաստում են մարդկային փոխհարաբերությունների ու շփումների մերձականությանը: Ի հավելումն այս կարևոր գործառույթի՝ տեղեկատվական տեխնոլոգիաներն ու տեղեկատվության հաճախակիությունը նպաստում են նաև զանգվածային հասարակությունների ձևավորմանը, հետևաբար, նաև ամբոխի զանգվածացմանը, քանի որ ստեղծում են ընդհանուր հուզական դաշտ և միմյանց ներկայության զգացում: Բանն այն է, որ տեղեկատվական հասարակություններում թեև մարդիկ գտնվում են միմյանցից ֆիզիկական որոշակի հեռավորության վրա, սակայն ապրում են միևնույն հույզերով, միևնույն խնդիրներով և ենթարկվում նույն սկզբնաղբյուրից բխող տեղեկատվության ազդեցությանը, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ ժամանակակից աշխարհում ամբոխի ձևավորման համար կարևորը արդեն ոչ թե «տարածական կուտակումն» է, այլ միևնույն տեղեկատվական ցանցերի մեջ ընդգրկվածությունը: Այլ կերպ ասած՝ ժամանակակից աշխարհում ամբոխը ոչ թե միևնույն աշխարհագրական-ֆիզիկական տարածքում հայտնված մարդկանց, այլ սահմաններ չճանաչող վիրտուալ տարածքի «հաճախորդների» կուտակում է, որոնց ինքնագիտակցությունը նույնքան տարբարվածված և անդեմ է, որքան նախորդինը, պարզապես վիրտուալ տարածության «հաճախորդ-ամբոխի» գիտակցությունը, պատկերավոր ասած, «ցրված» ամբոխային գիտակցություն է¹⁵: Անշուշտ, ֆիզիկական ու վիրտուալ տարածություններում ձևավորված և գործառող ամբոխները միմյանցից տարբերվում են նաև ցրվածության և խտության մակարդակներով, ինչը ազդում է նաև նրանց սոցիոմշակութային բնութագրերի վրա, բայց ակնհայտ է, որ երկու դեպքում էլ գործ ունենք ամբոխի ազդեցության ոլորտում հայտնված մարդու սոցիալ-հոգեբանական և սոցիոմշակութային նմանատիպ փոխակերպումների հետ, այսինքն՝ տարբեր են ամբոխի կերպերը, սակայն նույնն է վերջինիս «պատկանող» ամբոխի մարդու սոցիոմշակութային բնութագիրը:

Հետարդիական տեղեկատվական հասարակություններում ամբոխի մարդը մշտապես ենթարկվում է չդադարող տեղեկատվական հոսքերի ազդեցությանը: Տեղեկատվության արագացող հոսքերը մարդկանց մեջ առաջացնում են ժամանակի տևողության խտացվածության զգացում, ինչը թույլ չի տալիս մարսել դեպի մարդը հոսող տեղեկատվությունը: Ամեն մի նոր հաղորդում, շրջակա աշխարհից ամեն մի նոր տեղեկատվություն ազդում են սոցիալական հարաբերությունների ձևավորման ընթացքի վրա՝ կերպարանափոխելով նաև այդ ընթացքի

¹⁵ Տե՛ս **Московичи С.** Век толп. М., 1998, էջ 33:

համար պատասխանատու սոցիալական սուբյեկտի «անձ-դիմակը»: Բանն այն է, որ մարդու արժեքային համակարգն ու կենսիմաստային կողմնորոշիչները ձևավորվում են իր ներկայում տևող ժամանակի յուրացման, ներկայից անցյալ կերտելու ընթացքում: Տևող ժամանակը, ներկայից անցյալ տեղափոխվելով, վերածվում է հիշողության և դառնում է այն հոգևոր ու կենսիմաստային պաշարը, որը մարդուն մղում է իր կենսագործունեությունը իմաստային մեկնաբանելուն: Մակայն ամեն մի տևող ներկա ոչ միայն անցյալ դառնալու, այլև հիշողության վերածվելու համար կարիք ունի որոշակի մտածական հակազդեցության. մարդու միտքն ու հիշողության ունակությունը պետք է կարողանան հասցնել մարտել իր ներկայում անընդհատ հոսող իրականությունը՝ վերջինիս վերապրման և իմաստային մեկնաբանման ենթարկելու միջոցով: Այս առումով ժամանակակից տեղեկատվական, սպառողական կամ զանգվածային հասարակություններում ներկայի յուրացման մարդու էկզիստենցիալ կարողությունը ենթարկվում է ձևախեղումների: Բանն այն է, որ տևական ժամանակ գտնվելով չկապակցված տեղեկատվության ազդեցության տակ՝ մարդու մտածողությունը ամբողջականից վերածվում է հատվածականի և արդեն դժվարությամբ է իր ներկան իմաստային մեկնաբանման ու արժևորման ենթարկում: Ներկայում տեղի ունեցող իրադարձությունները նա ընկալում է որպես իր հետ կապ չունեցող և իրենից անկախ դիպվածներ, որոնց թվացյալ առատությունն ու անընդհատությունը ստեղծում են իրերի ընթացքն ու հոսքը փոխելու անգործության և հետևաբար՝ նաև անպատասխանատվության զգացողություն:

Հետարդյունաբերական հասարակության կենսատրամաբանությունը թելադրում է վարքի յուրահատուկ նորմեր, որոնք ընդհանուր սոցիալական համակարգին հաղորդում են անկայուն և անհուսալի գծեր, որոնք էլ սոցիոմշակութային տարածությունում «բնակվող» մարդու մոտ ստեղծում են անհուսալի և անցողիկ իրականության պատրանք, մի իրականություն, որի անցողիկ արժեքները այլևս չեն կարող լինել կենսիմաստային հուսալի հենարաններ: Այլ կերպ ասած՝ ձևավորվում է մի յուրահատուկ «հոսող արդիականություն», որի սոցիոմշակութային տարածության մեջ մարդու կյանքը արդեն ոչ թե բնականոն և հանգամանքներով թելադրված «ճակատագիր» է, այլ հպանցիկ «խաղ»: Մինչ մի որևէ կենսաադիրքորոշում ապրում է իր լինելիության և իմաստնայնության հաստատման համար անհրաժեշտ ժամանակը, արդեն փոխակերպվում են մարդու կենսագործունեության իմաստային կողմնորոշիչները: Ու մի որևէ իմաստակիր կենսաադիրքորոշում դեռ չամրացած ու չկայացած՝ արդեն իսկ հայտնվում է քայքայման փուլում: Կրճատվում է գաղափարի՝ կենսական իմաստ դառնալու, կենսիմաստային ուղղորդչի վերածվելու ժամանակը: Կարճ ասած՝ ժամանակն այլևս «չի բավարարում» որևէ նույնականության կամ ինքնութ-

յան անձնական դիմակից անհատական դեմքի վերածվելու համար: Դիմակը չի հասցնում «կերտել» իր պատմությունը, չի հասցնում ստանալ բովանդակություն և որոշ ժամանակ անց կորցնում է նաև լինելիության իրավունքը: Ընդ որում, զանգվածային հասարակություններում «բնագրային նմանակման» սոցիոմշակութային գործիքի շնորհիվ անբովանդակ դիմակը անընդհատ կլոնավորվում, բազմանում է, և անբովանդակ դիմակ կրելու, առանց պատմության անձնավորություն ունենալու միտումը մեկեն վարակի նման պատում է ողջ սոցիալական համակարգը: Ավելին, երբ դիմակը գրկվում է պատմությունից, այսինքն՝ երբ որևէ անձնական հատկանիշ խիստ հարափոփոխ է և չի վերածվում մարդու բնութագրական որակի, ապա ըստ դիմակի կերպարի ի վերջո աղճատվում է նաև մարդու «դեմքը»: Տեղի է ունենում անձնավորության կորուստ, ինչը ծնում է նաև անհատականության կորստի սպառնալիքներ: Դիմակի՝ պատմություն կամ պատմական հիշողություն չունենալը փոխանցվում է նաև դեմքին, որը հանգեցնում է սոցիոմշակութային վտանգավոր մի միտումի՝ ձևավորվում է մարդաշխարհի հարաբերությունների կենսիմաստային խզում: Պատմություն չդարձող ժամանակը ի վերջո ի չիք է դարձնում ընդհանրապես կենսագրական պատմություն ունենալու հնարավորությունը: Արդյունքը լինում է այն, որ ժամանակակից ամբոխի մարդը կանգնում է «մանկուրտ» դառնալու, իր պատմությունն ու ազատությունը կորցնելու վտանգի առաջ: Ուստի տեղին է այն մտահոգությունը, որ արդիականության պայմաններում անհատականության իրացման և հասարակության զանգվածացման միտումները ձևավորում են սոցիոմշակութային այնպիսի միջավայր, որտեղ մարդն ի վերջո կվերածվի «անձամբոխի»¹⁶, այսինքն՝ անհատականություն չկերտած անձնավորությունը կլինի մարդու ինքնանույնականացման միակ հենքը, ամբոխի մարդու դիմակը կսերտաճի հետարդիականության անհատի դեմքին:

Եվ այսպես՝ դիմակի զանգվածացումը կարող է սոցիոմշակութային լուրջ վտանգ ստեղծել մարդու դեմքի պահպանման, անհատականության կերտման գործում: Տեղեկատվական տեխնոլոգիաների հենքի վրա ձևավորված ժամանակակից զանգվածային հասարակությունը «առաջարկում» է միջանձնային հարաբերությունների կերտման մի նոր մշակույթ, որին մարդիկ մասնակցում են՝ զինվելով զանգվածային միանման, անդեմ, միաչափ դիմակով: Զանգվածային դիմակը հոսող արդիականության պայմաններում չի հասցնում կերտել իր պատմությունը, ուստի չի հասցնում ձեռք բերել նաև բովանդակություն, ինչի հետևանքով կորցնում է նաև իր կենսագրական անկրկնելի դիմագիծը: Կորցնելով ժամանակի, պատմության կողմից «նախշվելու» հնարավորությունը՝ զանգվածային դիմակը չի վերածվում նաև դեմքի, այսինքն՝ չի նախապատրաստում գործառական ծանրաբեռնվածության այն

¹⁶ Чикин Б. Н. Толпа // "Вестник Московского ун-та", 1990. Серия 12, № 6, с. 43.

անհրաժեշտ պաշարը, որի հենքի վրա պետք է կայանա նաև մարդու անհատականությունը: Ըստ էության, հետարդիական զանգվածային հասարակություններում մարդու անհատականության իրացումը դառնում է լուրջ խնդիր: Ամեն մի առանձին անհատ, սակայն, դատապարտված է դեմք ունենալու, իր անհատականությունը կերտելու ընթացքում գործելու միայնակ: Ստացվում է, որ մարդը մաս է կազմում ամբողջի, սակայն իրականում զուտ կլանված է ամբողջի՝ զանգվածի կողմից: Թվում է, թե մինչարդիականության փուլում հաղթահարված սոցիալական դիմակների մոգականացված ու պարտադրված կարգավիճակը այժմ փոխարինվում է մեկ ուրիշ, ավելի գորեղ դիմակով՝ ամբողջի մարդու զանգվածային, կլանող դիմակով, ինչն էլ կասկածի տակ է դնում մարդկային անհատականության, դեմքի եզակիության «իրավունքը»:

Բանալի բառեր – *դեմք, դիմակ, անդեմություն, անհատականություն, ամբողջ, ամբողջի մարդ, զանգվածային հասարակություն, մանկուրտ*

ЛЕВОН БАБАДЖАНИЯН – Дилемма личности и безличия в социокультурной среде массового общества. – В статье рассматриваются трансформации индивидуальности в социокультурной среде современного массового общества. Одна из социокультурных особенностей современного мира – это восприятие индивида в качестве социального существа, обладающего индивидуальностью (или лицом). Однако современный человек, имеющий право на индивидуальность, сталкивается с обезличивающими, порождающими одномерность стихиями массового общества, возникшими в результате тех или иных цивилизационных, политических или культурных трансформаций. В этих условиях функционируют характерные для толпы социокультурные закономерности, и под влиянием «растворяющего», обезличивающего воздействия толпы человек оказывается перед реальной угрозой утратить собственное лицо (или свою уникальность и неповторимость).

Ключевые слова: *лицо, маска, безличие, индивидуальность, толпа, человек толпы, массовое общество, манкурт*

LEVON BABAJANYAN – Dilemma of Facedness and Facelessness in the Social-Cultural Context of Mass Society. – The article considers the problem of transformation of individuality in the social-cultural context of contemporary mass society. One of the peculiar social-cultural characteristics of contemporary world is that the individual is viewed as a social creature that has individuality. However the contemporary man who has the right of being individuality runs into defacing, one-dimensionalising elements of mass culture which has emerged as a result of some civilizational, political and cultural transformations. Regularities peculiar to the crowd function within mass culture and as a result being subjected to dissolving, defacing influence of mass crowd one encounters the risk of losing the uniqueness of one's own face.

Key Words: *face, mask, facelessness, individuality, crowd, man of a crowd, mass culture, mankurt*

**ԴԻՍԿՈՒՐՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏ. ՄԻՇԵԼ ՖՈՒԿՈ**

ՀԱՅԱՐՓԻ ՄԱՀԱԿՑԱՆ

Մոցիալական գիտություններն այսօր ավելի ու ավելի են դիմում լեզվին ու դիսկուրսին՝ իբրև գիտական վերլուծության մեթոդաբանական հիմնավորման: Այս միտումներն ավելի նկատելի դարձան հետարդիականության համատեքստում: Թերևս պատճառներից մեկն այն է, որ հետստրուկտուրալիզմի պատմությունը հաճախ որոշարկում են իբրև արձագանք լեզվի և դիսկուրսի ստրուկտուրալիստական տեսություններին, որոնցից շատերում լեզուն ու դիսկուրսը դիտվում են իբրև հաղորդակցության գործիք և արդյունք: Դիսկուրսի կառուցվածքների վերլուծության միջոցով հաղորդակցվողը հասնում է խոսքի ըմբռնմանն ու լեզվի կիրառման նպատակներին:

Այդ իսկ պատճառով հետարդիականության ուշադրության կենտրոնում է հայտնվում լեզվի խնդիրը, մտածողության լեզվային բնույթը, մարդու գործունեությունն իբրև «դիսկուրսիվ պրակտիկա»: Հետարդիականության դիսկուրսի ինտերակտիվ կողը հիմնվում է դիալոգի, դիալոգիզացիայի և ներսուբյեկտիվության հասկացությունների վրա, որոնք բանալի բառեր են հետարդիականության դիսկուրսի համընդգրկուն դիտարկման համար:

Դիալոգի էությունը հետևյալն է՝ խոսքում սուբյեկտը կարող է դառնալ խոսելու օբյեկտ և ընդհակառակը: Իմաստը մշտապես ներառված է տեքստի ընթերցման կամ մեկնաբանության գործողություններում: Նման դրսևորումը կարգավորվում է կոնկրետ տեքստերի բազմաթիվ հատկություններով: Կարող ենք փաստել, որ հետարդիական դիսկուրսը կարգավորվում է կողերով ու ենթակողերով, որոնք էլ հենց որոշարկում են գեղարվեստական տեքստի հատկությունները, էությունը: Ինչպես կառաջադրվի և կընկալվի իմաստը՝ մեծ հաշվով կախված է տեքստը ստեղծող և ընկալող անհատից:

Ժակ Դերիդայի տեսության համաձայն՝ անհատի ինքնագիտակցությունը միևնույն ժամանակ տեքստերի ամբողջություն է, քանի որ գտնվում է «տեքստի ներսում», այսինքն՝ որոշակի պատմական գիտակցության կամ մշակույթի շրջանակներում¹: Որոշակի իմաստ, այնուամենայնիվ, արդեն առկա է մեր գիտակցության մեջ, որը մեզ թվում

¹ Տե՛ս և **Դերրիդա Ջ.** Письмо и различие. М., 2000, էջ 17:

է բնական ու հասկանալի, ընդ որում՝ կողեր պետք չեն դրանց գաղտնագերծման համար: Այսպիսով, հասկացումը պայմանավորված է կողավորման գործընթացներով, որոնք արմատավորվում են ընկալման մեխանիզմի մեջ և որոշարկվում են մշակույթով ու ավանդույթներով:

Ներտեքստայնությունն այն հայեցակարգի էությունն է, որում բառը դիտվում է ոչ թե որպես որոշակի կետ (տևական իմաստ), այլ «տեքստային հարթությունների խաչման կետ, տարաբնույթ նամակների՝ գրողի և հասցեատիրոջ երկխոսություն, որոնք ստեղծվել են ներկա և անցյալ մշակութային համատեքստերով»², այլ կերպ ասած՝ ցանկացած տեքստ մեջբերումների խճանկար է, այլ տեքստերի կուտակման և փոխակերպման արդյունք:

Հետարդիականության դիսկուրսի դիալոգիզմը դրսևորվում է «սուբյեկտների հակասականության, առասպելների բազմաֆոնության, ինչպես նաև մշակույթի հեռավոր պատմական լեզվի բազմաֆոնային տեքստի մեջ»³: Հարկ է նշել նաև, որ հետարդիական դիսկուրսի դիալոգիզացիան «բաց արտադրանքի» իրականացման փորձ է, որում մեկնաբանությունը հնարավոր է դառնում պատմության ցանկացած մակարդակում:

Հետարդիականության բոլոր տեսաբանները, չնայած որոշ տարբերություններին, համարում են, որ լեզուն «տիրում է» իր կրողին՝ որոշարկելով նրա մտածողության միջոցներն ու կենսագործունեությունը: Այստեղ լեզուն ներկայացվում է իբրև նշանային կառուցվածք, որտեղ նշանակություններն ի հայտ են գալիս լեզվի կառուցվածք հանդիսացող նշանների հարաբերությունների համատեքստում, որը մեծ հաշվով պայմանավորված է այդ կառուցվածքում իրենց ունեցած որոշակի դիրքով, այլ ոչ թե իրականության «փաստերի» հետ համապատասխանությամբ կամ սուբյեկտի նախապատվություններով:

Հետարդիականությունը հրաժարվում է ռեֆերենցիալ լեզվի նկատմամբ նախկին հավատից, այլ կերպ ասած՝ լեզվի՝ իրականությունը ճշմարիտ ու հավաստի վերարտադրելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով աշխարհի հասկացումը, որը, ըստ հետարդիականության ներկայացուցիչների, հնարավոր է միայն լեզվի մեջ ու լեզվի միջոցով, ոչ թե արդյունք է «աշխարհին ինչպես որ է»-ի, այլ հետևանք է «տեքստերի պատմության»: Հետարդիականության մեջ ցանկացած տեքստ մտածելի է միայն իբրև տեքստ, դիսկուրս, պատում: Ժամանակակից ռեալությունը նկարագրելու համար հետարդիականության ներկայացուցիչները հենվում են տվյալ ժամանակաշրջանի լեզվի ու

² **Кристева Ю.** Бахтин, слово, диалог и роман. Разрушение поэтики. К семиологии парадигм // "Французская семиотика: от структурализма к постструктурализму". М., 2000, с. 428.

³ **Покровская Е. А.** Русский синтаксис в XX веке: лингвокультурологический анализ. Ростов-на-Дону, 2001, с. 349.

բառերի վրա: Ու, ըստ Լիոթարի, եթե կոնկրետ ժամանակաշրջանը, հասարակությունը կամ կոնկրետ անհատը չունեն իրենց պահանջ-մունքներն արտահայտելու դիսկուրսիվ միջոցներ, ապա վերածվում են «գոհի»՝ դատապարտված լռության⁴: Լիոթարն ընդգծում է, որ 20-րդ դարում ձևավորված ժամանակակիցության նախագիծը խախտված է (այդ նախագիծը Լիոթարն անվանում է մետապատում): Դրա փոխարեն նա առաջարկում է մանրապատումների համակարգ, որոնք, ըստ նրա, ապրում են առօրյայում և որոշարկում այն: Մշակելով մանրապատումի գաղափարը՝ Լիոթարն առանձնացնում է կանոնների երկու համակարգ, համաձայն որոնց էլ կառուցվում է խոսքային գործունեությունը. «վարչակարգերի» առաջարկներ և «դիսկուրսի» ժանրեր: «Վարչակարգերի» առաջարկները նախադասություններ կազմելու կանոններն են, իսկ «դիսկուրսի» ժանրը՝ այս կամ այն նպատակին հասնելու համար նախադասությունների համադրման կանոնները⁵:

Հետարդիականության ներկայացուցիչները ցանկացած պատմական դարաշրջանի մշակույթ ներկայացնում են իբրև բազում տեքստերի գումար կամ իբրև ինտերտեքստ: Ժակ Դերիդան մշակույթն ամբողջությամբ դիտում է իբրև դիսկուրսների կամ տեքստերի հանրագումար և պնդում, որ «տեքստից դուրս ոչինչ գոյություն չունի»⁶: Ցանկացած անհատ անխուսափելիորեն գտնվում է «տեքստի ներսում», որոշակի պատմական գիտակցության շրջանակներում: Այսինքն՝ ողջ աշխարհն, ըստ նրա, անսահման ու անվերջ տեքստ է, և տեքստի հասկացումը հնարավոր է միայն «մշակույթի դիսկուրսիվ դաշտում», այլ կերպ ասած՝ դրանք կարելի է հասկանալ միայն այլ տեքստերի հետ ունեցած կապի մեջ:

Դիսկուրսը ենթադրում է մարդկային հարաբերությունների դիալեկտիկան, որն ընկած է այդ հարաբերությունների հիմքում և որոշարկում է դրանք: Լականը, մասնավորապես, պնդում է, որ դիսկուրսը վերածվում է սոցիալական կապերի որոշակի ձևի, ու «թեև կարող է գործառել նաև առանց բառերի, այդուհանդերձ հիմնային հարաբերություններում հնարավոր չէ առանց լեզվի»⁷: Ըստ նրա՝ սուբյեկտը ենթարկված է դիսկուրսին, Ուրիշ-ին, ով միջնորդի դեր է կատարում «ինքն իր և իր նմանների հետ հարաբերություններում»⁸:

Սակայն հետարդիական դիսկուրսին յուրովի մեկնաբանություն է տվել ֆրանսիացի մտածող Միշել Ֆուկոն, ում մոտեցումն էլ սույն հոդվածի խնդրո առարկան է: Ֆուկոն խիստ ժխտողական վերաբերմունք

⁴ Տե՛ս Լիոթար Ջ.-Փ. Состояние постмодерна. СПб., 1998, էջ 60:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 62:

⁶ Դերրիդա Ջ. Структура, знак и игра в дискурсе гуманитарных наук // "Французская семиотика: От структурализма к постструктурализму". М., 2000, с. 407–420.

⁷ Լական Ջ. Изнанка психоанализа. Семинары: Книга 17 (1969–1970). М., 2004, с. 9.

⁸ Լական Ջ. Инстанция буквы в бессознательном, или судьба после Фрейда. М., 1997, с. 56.

ունի «տեքստային մեկուսացվածությունը»: Ըստ նրա՝ տեքստը երկրորդային է այն ուժերի համեմատ, որոնք ծնում են յուրաքանչյուր կոնկրետ տեքստը և ընդհանուր «տեքստերի աշխարհը»: Այդ բոլոր տեքստերը գիտակցության համընդհանուր տեքստայնության դրսևորումներն են: Նա գաղափարը բխեցնում է պատմական և սոցիալական համակարգերի հղումների ուղիղ և սերտ կախվածությունից ու պայմանավորվածությունից: Ըստ այդմ՝ Ֆուկոն ձգտում է մարդկային մտածողությունը և գիտակցությունը դիտարկել պատմական տեսանկյունից: Մարդկային գիտակցության պատմականությունը Ֆուկոն որոշարկում է իբրև յուրաքանչյուր դարաշրջանի խորը և ներքին բնութագրիչ: Մրա հետ մեկտեղ՝ ցանկանում է ապացուցել մարդկային գիտակցության յուրատիպությունը յուրաքանչյուր առանձին ժամանակաշրջանում: Պատմությունը Ֆուկոն ըմբռնում է իբրև ընդհատումների շարք, իբրև «դիսկրետություն»⁹: Նման մոտեցման գոյությունը բացահայտելու համար նա դեռևս 20-րդ դարի 60-ականներին առաջադրում է «էպիստեմե» կամ «դիսկուրսիվ ֆորմացիա» հասկացությունը: «Էպիստեմե» «կոնցեպտուալ կառուցվածք» է, «մյուս բոլոր կառուցվածքների կառուցվածքը»: Դրա օրենքներով կազմակերպվում և գործառում են մյուս կառուցվածքները: Ընդ որում՝ նման «գերիշխող կառուցվածքին» վերագրվում է լեզվային բնույթ: Այն հատկապես հասկացվում և մեկնաբանվում է լեզվի համանմանությամբ: Ֆուկոն մարդկանց ողջ գործունեությունը հանգեցնում է այսպես կոչված «դիսկուրսիվ պրակտիկային», որի բովանդակությունը որոշարկվում է համապատասխան էպիստեմեով:

Այսպիսով՝ էպիստեմեի վիճահարույց դաշտն առաջանում է տարբեր գիտական հայեցակարգերի դիսկուրսներից: Չնայած մեթոդների և առարկայի տարբերությանը՝ գիտական հայեցակարգերն էպիստեմեի շնորհիվ իրականացվում են խիստ որոշարկված խոսքային, լեզվային կողում, որ բովանդակում է արգելքներ: Ըստ Ֆուկոյի՝ այդ լեզվային նորմն անգիակցորեն կանխորոշում է լեզվային վարքը և, հետևաբար, մարդկանց մտածողությունը:

Փաստորեն, ըստ Ֆուկոյի, դիսկուրսային միջավայրի կոնկրետ պատմական պայմաններն արձանագրող հետարդիականության փիլիսոփայության հասկացությունները կազմվում են դիսկուրսիվ պրակտիկայի սոցիոմշակութային որոշարկմամբ: Մ. Ֆուկոյի «Դիսկուրսի կարգը» աշխատությունը նվիրված է հենց դիսկուրսի սոցիոմշակութային որոշարկմանն ու վերահսկման մեխանիզմների և էության վերլուծությանը: Դիսկուրսի որոշարկմանն ու վերահսկմանն այդ մեխանիզմները հատկապես ցցուն են հենց մեր՝ ժամանակակից աշխարհում: Ֆուկոն դիսկուրսիվ պրակտիկայի համեմատական վերլուծությունը կատարում է ինչպես ժամանակակից մշակույթի, այնպես էլ դասական

⁹ Фуко М. Порядок дискурса. Киев, 1970, с. 38.

եվրոպական ավանդույթների համատեքստում, ինչը նրան թույլ է տալիս բացահայտել դիսկուրսի մշակութային կարգավիճակի առանձնահատկությունները, ձևավորել դիսկուրսի միջավայրի սոցիոմշակութային որոշարկման ամբողջական օրինաչափությունները:

Դիտարկելով դիսկուրսի պատմական էվոլյուցիան՝ Ֆուկոն սկսում է անտիկ ժամանակաշրջանից, երբ դիսկուրսը պատկանում էր գերիշխող և արտոնյալ մշակութային տարածության երևույթներին, «իրականացնում էր արդարադատությունը և շնորհներ էր անում յուրաքանչյուրին իր չափաբաժնով»¹⁰: Նման մշակութային շրջանակներում ձևավորվող դիսկուրսն «այնպիսին էր, որ, կանխատեսելով ապագան, ոչ միայն հայտարարում էր այն, ինչ պետք է տեղի ունենար, այլև հնարավոր էր դարձնում դրանց իրականացումը և հանդես էր գալիս ճակատագրի հետ ծրագրված»¹¹: Նման դիսկուրսը, ըստ Ֆուկոյի, ոչ միայն «լիազորագրված է», այլև ամբողջապես «վտանգավոր», քանի որ մշակութային տարածության հարաբերությամբ ունի շեշտված գերիշխանության ներունակություն¹²: Պատահական չէ, որ, օրինակ, Անտիկ աշխարհի մշակութային տարածության մեջ քաղաքական խոսքը տառացիորեն որոշում էր պետության ճակատագիրը:

Այլ կերպ ասած՝ անտիկ ավանդույթների շրջանակներում իրականանում է այն, ինչը Ֆուկոն անվանում է «պլատոնական մեծ բաժանում» մշակութային մեջ. «վեհագույն ճշմարտությունն» այլևս դիսկուրսի մեջ չէ, ոչ էլ դիսկուրսի իրականացման մեջ. այն այժմ ամփոփվում է դիսկուրսի կողմից ասվածի մեջ¹³: Այս մտային տարբերակման կարևորագույն սոցիոմշակութային հետևանքը դիսկուրսի և իշխանության միջև բաժանումը եղավ. «սուփեստն այլևս վտարված է», քանի որ դիսկուրսն «արդեն... կապված չէ իշխանության իրականացման հետ» և «այլևս արժեքավոր և ցանկալի չէ» վերջինիս համար: Բացի այդ՝ դիսկուրսն այնպիսի երևույթ է, որին բնորոշ է պոտենցիալ ինքնակազմավորում, այն կարող է ինքնադրսևորվել իբրև քառս և ցուցադրել ակնհայտ հնարավորության պատահական տատանումներ, սակայն դիսկուրսի այս որակները ոչ միայն չեն ներառվում ավանդական դետերմինիզմի հայեցակարգի մեջ, այլև ինչպես դիսկուրսի, այնպես էլ դրա վրա հիմնված դասական մտածողության քայքայման գործոն են:

Ըստ Ֆուկոյի՝ դիսկուրսը չի կարող դիտվել որպես մշակութային տարածության չեզոք տարր: Մշակութային կողմից դիսկուրսի պրակտիկայի կարգավորման մեխանիզմների մանրամասն վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություններ անելու արևմտաեվրոպական դասական մշակույթում դիսկուրսի խորքային սահմանափակության և

¹⁰ Նույն տեղում, էջ 35:

¹¹ Նույն տեղում, էջ 27:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 33:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 49:

հսկելիության մասին: «Ցանկացած հասարակության մեջ դիսկուրսի արտադրությունը և՛ վերահսկվում է, և՛ ենթարկվում ընտրողականության, կազմավորվում և վերաբաժանվում է մի շարք գործընթացների օգնությամբ, որոնց գործառույթն է չեզոքացնել դիսկուրսի լիազորությունները և դրա հետ կապված վտանգները, սանձահարել դիսկուրսի անկանխատեսելիությունը...»¹⁴, - գրում է Ֆուկոն:

Այլ կերպ ասած՝ ժամանակակից մշակույթում թույլատրելի է խոսել դիսկուրսիվ ակտերի իրականացման կանոնների, մեխանիզմների պահպանման, դիսկուրսիվ պրակտիկայի նկատմամբ հսկողության մասին:

Այսպիսով, հետազոտելով դիսկուրսիվ պրակտիկայի սոցիոմշակութային կարգավորման իրականացման կոնկրետ ձևերը, Ֆուկոն առանձնացնում է դիսկուրսի վերահսկման արտաքին և ներքին մեխանիզմներ:

Արտաքին մեխանիզմներ.

1. «Բացառման ընթացակարգեր», որոնցից ամենատարածվածը տարրական արգելանքն է (տաբու). օրինակ՝ «արգելանք օբյեկտի, իրադրության, ծեսի, սուբյեկտի (խոսողի) արտոնության կամ բացառիկ իրավունքի վրա: Այստեղ մենք գործ ունենք երեք տիպի արգելանքների հետ, որոնք փոխլրացնում են միմյանց՝ ստեղծելով պատնեշ, որը մշտապես փոփոխվում է՝ հասարակությունից և ժամանակաշրջանից կախված»¹⁵, այլ կերպ ասած՝ դիսկուրսի որոշ ոլորտներ այնքան էլ հասու չեն հասարակության բոլոր խավերին ու շերտերին: Ֆուկոն նշում է, որ մեր օրերում այս «պատնեշն» առավել նկատելի է քաղաքականությանն ու սեքսուալությանը վերաբերող դիսկուրսներում: Հարկ է նշել, որ քաղաքական դաշտում դիսկուրսն ունի իր ուրույն ընկալումը. այն իշխանական ռեսուրս է, որի միջոցով սոցիալական ինստիտուտներն իրականացնում են իրենց ինքնաներկայացումը, օրինականացումը, իրականության օրինակների կառուցումն ու տարածումը, ինչպես նաև դիրքավորումը սոցիոմշակութային և քաղաքական դաշտում: Եվ այսպես՝

ամեն ինչ չէ, որ կարելի է ասել,

բոլոր իրադրություններում չէ, որ կարելի է խոսել ամեն ինչի մասին, ոչ բոլորին է կարելի խոսել ամեն ինչի մասին:

Փոխարենն ասվում է, որ դիսկուրսը պետք է լինի պարզ կամ չեզոք, լինի այն տեղը, որտեղ սեքսուալությունը կզինաթափվի, իսկ քաղաքականությունը կհանդարտեցվի¹⁶:

2. «Տարանջատման և մերժման» կարգ. սա այնպիսի մեխանիզմ է

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 50:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 50:

դիսկուրսի մեջ, որ միմյանցից տարբերակում և հեռացնում է այնպիսի սոցիոմշակութային երևույթներ, ինչպիսիք են ողջամտությունն ու խելագարությունը: Ըստ Ֆուկոյի՝ արևմտյան մշակույթը որոշարկում էր խելագարին իբրև սուբյեկտ, ում դիսկուրսիվ պրակտիկան իր հիմնական չափորոշիչներով չէր համընկնում մեծամասնության դիսկուրսիվ պրակտիկային և հետևաբար չէր ներառվում նաև տվյալ ավանդության հաղորդակցական գործընթացների մեջ: Նույնիսկ Ժ. Դեյոզը և Ֆ. Գվատարին, ելնելով Մ. Ֆուկոյի հայեցակարգից, որտեղ նա հակադրում էր մշակութային անգիտակցական գործունեության գերիշխանությունը «սոցիալապես մերժելի» գործունեությանը (մի կողմից՝ պոետներ, գրողներ, արվեստագետներ, մյուս կողմից՝ խելագարներ, հիվանդներ, հանցագործներ), առաջ քաշեցին «շիզոֆրենիա» հասկացությունն իբրև անձի հիմնական ազատագրիչ և հեղափոխական սկիզբ, որ հակադրում է նրան կապիտալիստական հասարակության «հիվանդ քաղաքակրթությանը»¹⁷: «Իսկական» արվեստագետը, ըստ նրանց, անխուսափելիորեն «շիզոֆրեն անձ» է, և հասարակության մեջ իր չընդունվածությամբ նա ձեռք է բերում «սոցիալական այլասերվածի» համբավ ու ակամա ներառվում է շիզոֆրենիկական դիսկուրսի մեջ, դիսկուրս, որ հարցականի տակ է դնում համընդհանուր տրամաբանության իրավասությունը¹⁸:

Վաղ միջնադարից սկսած՝ խելագար էին համարում նրան, ում դիսկուրսը չէր կարող շրջանառվել մյուսների դիսկուրսի պես: Մրա հետ մեկտեղ՝ Ֆուկոն նկատում է, որ մեծամասնության կողմից ընդունված դիսկուրսի ձևին խելագարի դիսկուրսի անհամապատասխանությունը որակվում է իբրև դիսկուրս, որում բացակայում են իմաստը, հստակությունը, այսինքն՝ այն գերծ է կոնկրետ տրված «սահմանափակումներից, այլ կերպ ասած՝ այստեղ իմաստն ավելի առողջ է, քան ողջամիտ մարդկանց մոտ է»¹⁹: Մ. Մերվանտեսը կասեր՝ «Խելագարությունը հաղթահարում է բոլոր փաստարկները»²⁰: Երբեմն ասում են, որ խելագարի խոսքը չի համապատասխանում իրականությանը, նշանակություն չունի, դատարանում նա վկայություն չի կարող տալ, սակայն երբեմն էլ խելագարի խոսքին հատուկ լիազորություններ են տրվում, այսինքն՝ խելագարին հաճախ լիազորվում է ասել թաքնված ճշմարտություններ, ավետել ապագան, դիտարկումներ անել առանց խորամանկությունների, պարզունակ ձևով: Այսպես «Դոն Կիխոտ»-ը դիտվում է իբրև բացառապես ասպետական վեպերի դեմ ուղղված գրական նմանակում (պարոդիա), բայց հանճարի գրիչը միշտ ավելի մեծ է, քան նա ինքը. նա չի սահմանափակվում ժամանակավոր մտադրություններ-

¹⁷ Гватари Ф. Шизоанализ и производство субъективности. М., 2006, с. 86.

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 88:

¹⁹ Фуко М., նշվ. աշխ., էջ 53:

²⁰ Մ. Մերվանտես, Դոն Կիխոտ, Եր., 1934, էջ 7:

րով, ասպետական վեպերի քննադատությամբ: Մերվանտեսը նետվում է պայքարի՝ իր համար գենք ընտրելով ծիծաղը՝ ամենաուժեղ գենքերից մեկն այն ամենի դեմ, ինչ ապրել է իր դարը և դեռ շարունակում է գոյությունը քարշ տալ: Դոն Կիխոտի կերպարով Մերվանտեսը միանում է հումանիստներին՝ ցանկանալով, որ մարդիկ վերադարձնեն իրենց բնական վիճակը՝ ոսկեդարը: Այդ պայքարի համար նա ընտրում է հասարակության կողմից խելագար հռչակված ասպետին, ում շուրթերից էլ հնչեցնում է իր վեհագույն իդեալները, անսահման նվիրվածությունը մարդկությանը, նրան դարձնում դրական, համակրելի և նույնիսկ սիրելի: Չնայած ընթերցողները ծիծաղում են նրա որոշ անիմաստ արկածների վրա, ամեննին էլ չեն կասկածում նրա իդեալի մաքրությանը:

Դարեր շարունակ Եվրոպայում խելագարի՝ հասարակության կողմից այդպես հռչակվածների խոսքը կա՛մ չի լսվել, կա՛մ էլ լսելիս պարզապես ուշադրության չի արժանացել. այն ասվել և անմիջապես չկեցության է մատնվել, բայց, այդուհանդերձ, դոնկիխոտներ շատ կան պատմության էջերում: Ու ինչն է առավել ուշագրավ այստեղ, որ խելագարի խելագարության մասին տեղեկանում են հենց նրա խոսքերից. «...թե՛ անձանոթի խոսքերից, թե՛ կերպարանքից վաճառականները կռահեցին, որ նա խելագար է...»²¹, խոսքեր, որոնք խելագարության և ողջամտության բաժանման տարածությունն են: Այսօր գուցե ոմանք պնդեն, թե խելագարի խոսքն այլևս լուսանցքում չէ, թե այն այլևս չկեցության մատնված իրողություն չէ, այլ, ընդհակառակը, գրավել է մեր ուշադրությունը, և մենք այսօր փորձում ենք դրանում ինչ-որ իմաստ փնտրել կամ էլ գուցե ինչ-որ արարման ավերակներ ուրվագծել, ինչպես ասում է Ֆուկոն: Սակայն նման ուշադրության արժանանալը ևս վերջ չդրեց վերոնշյալ բաժանմանը: Թերևս ոչ թե բաժանումն է վերացել, այլ այն այժմ ուրիշ կերպ է գործում՝ այլ ուղղություններով, նոր ինստիտուտների միջոցով և բացարձակ այլ հետևանքներ ունի:

Իհարկե, գոյություն ունեն դիսկուրսի վերահսկողության ու սահմանափակման այլ ընթացակարգեր ևս, որոնք ինչ-որ իմաստով գոյություն ունեն դրսից, դրանք գործառում են իբրև բացառման համակարգեր և վերաբերում են դիսկուրսում ցանկության ու իշխանության դրսևորմանը:

Մրանք թերևս երկու հակադիր պատասխաններ են միևնույն մտահոգությանը. մտահոգություն, որ վերաբերում է դիսկուրսի այն պահին, թե ինչ է իրենից ներկայացնում մեր իրականության մեջ արտահայտված կամ նկարագրված դիսկուրսը, մտահոգություն դիսկուրսի անցողիկ գոյության վերաբերյալ, գոյություն, որ, իհարկե, դատապարտված է վերացման, սակայն դա սովորաբար այնքան ժամանակա-

²¹ Նույն տեղում, էջ 19:

տար է լինում, որ այդ ընթացքում դիսկուրսն արդեն դադարում է մնալ մեր իշխանության տակ, մտահոգություն առ այն, որ հենց դիսկուրսն է որոշում կռիվները, հաղթանակները, իշխանությունն ու ստրկությունը:

Հաշվի առնելով այս ամենը՝ Ֆուկոն առաջադրում է «դիսկուրսիվ վերահսկողության սկզբունքները»: Ֆուկոյի գնահատմամբ՝ եվրոպական միտքը «երբեք էլ չի մտահոգվել դիսկուրսի մեջ իմաստին ու խոսքին հատկացված տարածության չնչինությամբ, քանի որ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր եվրոպական մշակույթն առավելապես մտահոգ է մատուցման ու ընկալման տարրերի շեշտմամբ»²²:

Ծանոթանալով դիսկուրսի արտաքին ընթացակարգերին՝ անհրաժեշտ է, իհարկե, անդրադառնալ նաև դիսկուրսի *ներքին* ընթացակարգերին, քանի որ այս պարագայում դիսկուրսի նկատմամբ հսկողությունն արդեն իրականանում է հենց իր՝ դիսկուրսի կողմից, բացի այդ՝ միայն այս պարագայում դիսկուրսի կառուցման ու գործառման մասին պատկերացումները կլինեն քիչ թե շատ ամբողջական: Մրանք դասակարգման սկզբունքներ են, որ կոչված են սանձահարելու դիսկուրսի իրավիճակայնությունն ու պատահականությունը:

Խոսքն առաջին հերթին մեկնաբանությունների (comments) մասին է: Ֆուկոն կարծում է, որ դժվար թե գտնվի հասարակություն, որտեղ չլինեն հստակ կարևորության պատումներ, որոնք կանխատու, կրկնում են դիսկուրսը, որտեղ չլինեն դիսկուրսի բանաձևեր, տեքստեր, ծիսակարգեր, որոնք արտահայտվում են որոշակի կոնկրետ իրադրություններին համապատասխան: Կարճ ասած՝ կարելի է ենթադրել, որ բոլոր հասարակություններում էլ բավականին կանոնավոր կերպով առկա է դիսկուրսային բազմաշերտություն: Այսպիսով, կան դիսկուրսներ, որոնք

- փոփոխվում են օր օրի,
- վերանում են այն գործողությունների հետ, որոնցում արտահայտվել են,

• ընկած են խոսքի մի շարք նոր գործողությունների հիմքում, որոնցով ըմբռնվում են, փոխակերպվում, այլ կերպ ասած՝ դիսկուրսներ, որ գոյություն ունեն իրենց ձևավորումից անդին. անվերջորեն ասվում են, արդեն ասված են և դեռ պետք է ասվեն²³:

Ակնհայտ է, որ այս շերտատումը ո՛չ տևական է, առավել ևս՝ բացարձակ: Մի կողմից ունենք ինչ-որ թվով ընդմիջտ տրված հիմնական կամ ծնվող դիսկուրսներ, իսկ մյուս կողմից՝ դրանց բազմաթիվ կրկնություններ, մեկնաբանություններ (comment), մեկնություններ (interpretation): Շատ հաճախ առաջնային տեքստերն անկանում են և կորչում, իսկ երբեմն էլ մեկնաբանությունները զբաղեցնում են հենց

²² **Փյոկո Մ.**, նշվ. աշխ., էջ 22:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 59:

դիսկուրսի տեղը (այսօր սոցցանցերում տեղ գտած մի շարք հոդվածների մեկնաբանություններն ինչ-որ պահից իրենց վրա են վերցնում դիսկուրսի հիմնական գործառնությունները և սկսում են իրենք մեկնաբանվել, և սա ինչ-որ առումով անվերջանալի գործընթաց է): Այլ կերպ ասած՝ այստեղ մենք գործ ունենք առաջնային և երկրորդային տեքստերի հետ: Երկրորդային տեքստերը մեկնաբանություններն են, որոնց հիմնական դերը դիսկուրսում արդեն իսկ ասվածի վերհանումն է: Սովորաբար դրանք նոր դիսկուրս կառուցելու հնարավորություններ են²⁴:

Ապակառուցողականությունը՝ իբրև հետարդիական վերլուծության ընդհանուր մեթոդ, վերլուծելով մշակույթի ցանկացած երևույթ, ցանկացած տեքստ, անխուսափելիորեն վերածվում է բազմիմաստ և անվերջ մեկնաբանելի գործընթացի, որ հարաբերական է դարձնում ցանկացած տեքստ, ցանկացած հասկացություն՝ արդյունքում իմաստագրկելով նաև ճշմարտության խնդիրը: Այդ իսկ պատճառով լեզուն առանց միջնորդավորման իմաստ կամ ճշմարտության կրող կայուն միջավայր չէ: Այստեղից էլ բխում է հետարդիականության կարևորագույն դրույթներից մեկը՝ տեքստի աննույնականության ու գիտելիքի անհուսալիության դրույթը, քանի որ վերջիններս ձեռք են բերվում լեզվի միջոցով:

Բացի վերոնշյալից՝ դիսկուրսի կարևորագույն սկզբունքներից է հեղինակը՝ իհարկե՝ ոչ որպես խոսող անհատ, ով արտահայտել կամ գրել է տեքստը, այլ իբրև դիսկուրսի խմբավորման սկզբունք, իբրև դրան նշանակության աղբյուր և միասնություն, իբրև դրա կապվածության կենտրոն: Այս սկզբունքը գործում է ոչ ամենուր և ոչ միշտ:

Կան բազմաթիվ դիսկուրսներ, որ գործառում են այնպես, որ դրանց իմաստը և ազդեցությունն իրագործվի առանց հեղինակին հաշվի առնելու. դիսկուրսի նման օրինակներ են պայմանագրերը, հրամանագրերը, որտեղ հատկապես կարևորվում են ստորագրող կողմերը, քան ինքը՝ հեղինակը: Իհարկե, կան նաև այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են գրականությունը, փիլիսոփայությունը և գիտությունը, որտեղ ընդունված է տեքստը վերագրել հեղինակին: Օրինակ՝ միջնադարում հեղինակը նաև ճշմարտության ապացույցն էր, այսինքն՝ իրենց գիտական արժեքը տեքստերը ձեռք էին բերում հեղինակի միջոցով, այնինչ նոր ժամանակներում գիտական դիսկուրսն ավելի ու ավելի է պարզեցվում. այժմ հեղինակն անհրաժեշտ է ընդամենը թեորեմին անուն տալու համար: Սակայն գրականության ոլորտում հեղինակի դերն ավելի է կարևորվում: Այսպես, օրինակ, միջնադարում դրամաները, պոեմները և գրական այլ ստեղծագործություններ շրջանառվում էին հիմնականում անանուն, մինչդեռ 17-րդ դարից սկսած՝ կարևորագույն գործոն է, թե ով է այդ ստեղծագործությունների հեղինակը: Ավելին, այժմ երբեմն

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 60:

հեղինակից «պահանջում են» իր անձի ներկայությունը տվյալ ստեղծագործության տարածության մեջ:

Այսպիսով, ըստ Ֆուկոյի՝ ցանկացած պատմական դարաշրջանում առկա է գիտելիքի քիչ թե շատ միասնական, առանձնահատուկ համակարգ, որ կառուցվում է տարբեր գիտակարգերի դիսկուրսիվ պրակտիկաներից՝ էպիստեմեից, որն իրականանում է իբրև լեզվային կոդ, նորմա, կանխորոշող անգիտակցական լեզվական վարք, և հետևվաբար պայմանավորում է անհատների մտածողությունը կոնկրետ դարաշրջանում: Ինքը՝ Ֆուկոն, արևմտաեվրոպական քաղաքակրթության պատմության մեջ առանձնացնում է հինգ հիմնական փուլեր՝ անտիկ, միջնադարյան, վերածնունդ (15-16-րդ դդ.), լուսավորականություն (17-18-րդ դդ.) և ժամանակակից (19-րդ դարի սկզբից մինչ իր ապրած օրերը): Այս փուլերն արմատապես տարբերվում են. ընդ որում՝ այդ տարբերությունները առաջին հերթին, ըստ Ֆուկոյի, վերաբերում են դարաշրջանների մտածողության ոճին: Ֆուկոն էպիստեմեն սկզբունքորեն անճանաչելի է համարում իր ժամանակակիցների համար: Բանն այն է, որ դրա ազդեցության մեխանիզմն անգիտակցականի ոլորտում է: Ըստ նրա՝ էպիստեմեն մշտապես ներքուստ ենթարկվում է իշխանական հարաբերությունների կառուցվածքին և հանդես է գալիս իբրև «ամբողջականացնող դիսկուրս», օրինականացնող իշխանություն, ինչի համար էլ չի կարող լինել չեզոք կամ օբյեկտիվ: Անշուշտ, այս ելակետային ու կարևոր գաղափարները և դրանց հետ կապված ողջ քննադատական դրսևորումներն անհնար է հասկանալ այն արմատական սոցիոմշակութային փոփոխություններից դուրս, որ տեղի են ունեցել աշխարհում, նախ և առաջ արևմտյան հասարակության մեջ համաշխարհայնացվող մաս-մեղիայի համակարգերի, պատրանքներ ու առեղծվածներ ծնող զանգվածային գիտակցության ազդեցությամբ: Այս փոփոխություններն ուղղորդում են մշակույթի արմատական, գոյաբանական փոխակերպումները՝ ի հայտ բերելով մշակութային պատկերացումների ու գիտելիքների և սոցիալական ու մարդկային ռեալության կապի կորուստ՝ դառնալով սիմուլյակր: Նորաձև դարձած այս հասկացությունը նշանակում է կեղծ իր՝ փոխարինելով «տանջալի, զարհուրելի, հոգեվարք ապրող» իրականությանը, վերացնելով իրականության և որևէ ռեֆերենտ չունեցող երևակայության, թվացյալության միջև տարբերությունը: Հորինվածի և իրականության կապը, ըստ Բոդրիարի, տեղի է ունենում մի քանի փուլով, որ նշանավորվում է ռեֆերենտի կոդերի ազատության աճով. օբյեկտիվ իրականության արտացոլումը փոխարինվում է դրա այլասերմամբ, ապա՝ դրա բացակայության քողարկմամբ, ի վերջո՝ իրականության հետ որևէ կապի կորստով, որ փոխարինվում է թվացյալությամբ:

Այս կերպ մարդու՝ աշխարհի հետ հարաբերությունը փոխակերպ-

վում է արմատական ձևով: Արդեն ոչ մի հղում չի կատարվում «ոեալ» օբյեկտին, քանի որ աշխարհում, որտեղ գերիշխում են արհեստական մոդելները, տարբերություն չկա «իրերի» և «բառերի» միջև: Օբյեկտից զրկված սուբյեկտը չի կարող համեմատել իր պատկերացումներն օբյեկտի հետ և հայտնվել հիպերիրականությունից կախվածության մեջ: Մարդկային կյանքը դառնում է անիրական, աննույնական, առաջ է բերում անկայունության և աշխարհի համընդհանուր ապակազմակերպվածության զգացողություն:

Ֆուկոն փորձում է նաև ուրվագծել էպիստեմների հերթափոխման մեխանիզմները, որի էությունը ներառվում է էպիստեմի փոխակերպումներում կամ մուտացիաներում: Ֆուկոն դիտարկում է դիսկուրսիվ պրակտիկայի փոխակերպման երեք դաս՝

- շեղում կամ դերիվացիա՝ ներդիսկուրսիվ կախվածություն - դեդուկցիայի ճանապարհով տեղի ունեցող փոփոխություններ,
- որակափոխում կամ մուտացիաներ՝ միջդիսկուրսային կախվածություն - գիտակարգերի միջև սահմանների միախառնում, դերերի փոփոխում և սուբյեկտի դիրքորոշումներ,
- վերաբաշխում կամ ռեդիստրիբուցիա՝ արտադիսկուրսային կախվածություն - դիսկուրսի գործառույթների միախառնում²⁵:

Այսպիսով, շոշափելով գիտելիքի ստացման այս խնդրակարգը, կապված այս կամ այն դարաշրջանը բնորոշող հասկացություններում և տեքստերում դրանց արտահայտման յուրահատկություններից, Ֆուկոն ընդհանրացնում է, որ գոյություն ունի դիսկուրսիվ կարգ, ասել է թե՛ տվյալ դարաշրջանում շրջանառվող ասույթների ամբողջություն, որոնք ենթարկվում են ձևավորման միևնույն սկզբունքներին, և հենց այդ կարգն է պայմանավորում կոնկրետ դարաշրջանը բնորոշող ասույթների կառուցման և բաշխման սկզբունքը: Այլ կերպ ասած՝ դիսկուրսն «անանուն, պատմական, ժամանակով և տարածությամբ որոշարկված կանոնների ամբողջություն է, որ որոշարկում է փոխազդեցության արտահայտման պայմանները տվյալ դարաշրջանում և տվյալ սոցիալական, տնտեսական, աշխարհագրական կամ լեզվային միջավայրի համար»²⁶: Այդ իսկ պատճառով կոնկրետ սոցիալական խմբի անդամները հաղորդակցման գործընթացում նորեկներին և այլ խմբերի անդամներին տեղեկացնում են իրենց սոցիալական խմբի գաղափարախոսության մասին և պաշտպանում այն: Այս կերպ գաղափարաբանական սոցիալիզացիան իրականանում է դիսկուրսի մեջ և դիսկուրսի միջոցով: Փաստացի, այսպիսի ընկալման դեպքում դիսկուրսը հաղորդակցության սուբյեկտի սոցիալական հայտանիշ է:

²⁵ Տե՛ս **Фуко М.** Археология знания. Киев, 1996, էջ 118:

²⁶ Նույն տեղում, էջ 119:

Բանալի բառեր - դիսկուրս, դիսկուրսիվ կարգ, մեկնարանություն, մեկնություն, տեքստ, ինտերտեքստ, նարրատիվ, մետանարրատիվ, էպիստեմե

ԱՅԱՐՄԻ ՏԱԱԿՅԱՆ – *Discourse as a social context of communication.*
Мишель Фуко. – Постмодернистская парадигма связана с восприятием мира как хаоса, управляемого вероятностными законами или игрой слепого случая и разгулом бессмысленного насилия. Отсюда и декларируемый отказ от детерминизма и поисков истины, что ведет к подрыву авторитета метанарраций и фрагментарности противоречивого дискурса. Нелинейность смысла постмодернистского дискурса способствует его диалогизации и как следствие – интерактивности участников общения. В постмодернизме наблюдается расширение новых возможностей локальных дискурсов, то есть не линейная одномерность знакового ряда, а пространственная многолинейность означающих. Она проявляется в нелинейности смысла, приводящей к интерактивности восприятия, то есть вовлечению читателя в событие, совместную креативную деятельность по производству текста. Книга французского философа М. Фуко «Порядок дискурса» посвящена социокультурному взгляду на дискурс. Учёный анализирует и сравнивает дискурсивные практики, культивируемые в современной ему культуре и принадлежащие классической европейской традиции. Это позволяет ему выявить культурный статус дискурса и его специфику, а также сформулировать интегральные закономерности социокультурной детерминации в дискурсивной сфере.

Ключевые слова: *дискурс, порядок дискурса, комментарий, интерпретация, текст, интертекст, нарратив, интернарратив, эпистеме*

ՆԱՅԱՐՄԻ ՏԱՆԿԱՅԱՆ – *Discourse as a Social Context of Communication.*
Michel Foucault. – Post-modernist paradigm is associated with the perception of the world as chaos, managed by probabilistic laws or a game of chance and senseless violence of the rampant, hence declared rejection of determinism and the search for truth that leads to undermining credibility metanarratives fragmentation and contradictory discourse. Nonlinearity sense of postmodern discourse contributes to its dialogization and, as a consequence – the interactivity of communication participants. In postmodernism opportunities of local discourses have been expanding, that is not the sign of a number of linear one-dimensional and spatial multilinearity meaning. It is manifested in the form of non-linearity of meaning, leading to the perception of interactivity, i. e. the involvement of the reader in the event that the joint creative activities for the production of the text. This discourse is perceived as a “contact unity”, “game of the rules” and “concepts manipulate the way”, which is due to social norms and values. Foucault’s “Discourse order” was devoted to the analysis of socio-cultural definition, control mechanisms of discourse. Foucault makes a comparative analysis of the performance of discursive practices with modern culture, both in the context of modern and classical European traditions, which allows him to expose the status of cultural discourse characteristics, determination of integrated socio-cultural patterns shape the discursive environment, in other words, discourse analysis, which may include representative different levels, exposes discourse the communicative-pragmatic framework that is given to the socio-cultural environment in which the language level is designed, determines discourse as, so-called, “verbal packaging”.

Key words: *Discourse, discursive order, comment, interpretation, text, intertext, narrative, metanarrative, episteme*

**ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԱԼ. ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ
ՏԵՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԱՐՓԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Ազգային հարցը դասվում է սոցիալ-փիլիսոփայական դեռևս չլուծված հիմնախնդիրների շարքին: Այն սերտորեն առնչվում է ազգ, ազգայնականություն, ազգային ինքնություն, ազգային գաղափարախոսություն և ազգային պետություն հասկացությունների հետ: Ժամանակակից աշխարհում անընդհատ կարելի է ականատեսը դառնալ ազգային շարժումների, որոնց շնորհիվ ստեղծվում են ազգային պետություններ՝ ազգի իրավաքաղաքական կյանքի բնականոն կազմակերպումը և կարգավորումը ապահովելու համար: Այս գործընթացները սկզբնավորվել են դեռևս նոր ժամանակի արշալույսին: Սկսած 19-րդ դարից՝ խնդրի վերաբերյալ քննարկումներն առավել ակտիվանում են՝ դառնալով գերազանցապես ավստրոմարքսիզմի տեսաբաններ Օ. Բաուերի, Կ. Ռենների և այլոց ուսումնասիրության առարկան: Վերջիններս, հակադրվելով մարքսիզմի գաղափարախոսությանը, համոզված էին, թե սոցիալիզմի հաստատմամբ ազգերը չեն վերանա, սոցիալիզմը ժողովրդին կհամախմբի ազգային-մշակութային հանրությամբ, ազգը կդարձնի ինքնավար: Ազգայինը վեր հանելու փորձերն ավելի հաճախակի էին 20-րդ դարասկիզբին, երբ ձևավորվեցին և վառ դրսևորվեցին ազգի բնորոշման և դրանից ածանցվող մի շարք խնդիրների լուծմանը վերաբերող տարբեր, անգամ հակադիր տեսակետներ, որոնք երբեմն նույնիսկ դրսևորվում էին ծայրահեղորեն: Մի կողմից՝ սկսվեց ազգայնականության ծայրահեղ դրսևորման, կամ որ նույնն է՝ ազգայնամոլության տարատեսակի՝ ֆաշիզմի հաղթարշավը, մյուս կողմից՝ աշխարհը հեղեղվեց մարքսիզմի գաղափարախոսության առաջամարտիկներով, որոնք հավատում էին Մարքսի և Էնգելսի տեսության կենսագործման հնարավորությանը: Ազգային հարցի լուծման հրատապությունն ու կարևորությունը ցայտուն դրսևորվեցին 20-րդ դարասկզբի ռուս իրականության մեջ: Ռուսական կայսրությունում ապրում էր հարյուրից ավելի ազգերից բաղկացած մի հանրություն, որտեղ յուրաքանչյուր ազգ առաջ էր քաշում իր պահանջները, որոնք շատ հաճախ հակասում էին մյուսի շահերին՝ հանգեցնելով ազգամիջյան բախումների: Մա մի ժամանակաշրջան էր, երբ ռուս իրականության մեջ սկսում էին ձևավորվել առաջին քաղաքական կուսակցությունները, որոնց ծրագրերում կարևոր

տեղ էին տրվում ազգային հարցի լուսաբանմանը, առկա խնդիրների վերհանմանը և առաջարկվում տարբեր լուծումներ: Այդ տեսակետից առանձնապես հատկանշական են ազգային հարցի լուծման վերաբերյալ մարքսիզմի տեսաբանների ծավալուն անդրադարձները՝ ի դեմս Վ. Ի. Լենինի, ով հարցի առնչությամբ իր ուսումնասիրությունները սկսել էր դեռևս իր հեղափոխական գործունեության սկզբում՝ 1890-ական թվականներից: Հենց այս ժամանակահատվածում էլ Լենինը առաջադրում է ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարը, որը, դառնալով ՌՄԴԲԿ-ի քաղաքականության ծրագրային գլխավոր կետերից մեկը, բոլշևիկների համար դարձավ Ռուսական կայսրությունը քայքայելու շատ հարմար գործիք: Հետագայում՝ 1905-1907 թթ. և 1912-1914 թթ., ազգային ինքնորոշման իրավունքի լենինյան հայեցակետը ավելի է որոշակիանում. «...ազգերի ինքնորոշում ասելով հասկացվում է նրանց պետական անջատումն օտարազգի կոլեկտիվներից, հասկացվում է ինքնուրույն ազգային պետության գոյացումը»¹: Ազգության գաղափարը Լենինի և նրա համախոհների կողմից հռչակվում է բուրժուական նախապաշարմունք, որը պետք է վերանսար հեղափոխության հաղթանակից հետո՝ ջնջելով ազգային թե՛ տարածական, թե՛ հոգեբանական սահմանները: Իսկ մինչ այդ ազգերի ինքնորոշման իրավունքի միջոցով հարցին պարզապես միջանկյալ լուծում էր տրվում: Խնդրի մարքսիստական լուծումը քննադատվեց այլ քաղաքական հոսանքների ներկայացուցիչների՝ կադետների, էսեռների, մենշևիկների կողմից, որոնք ի հակակշիռ առաջադրեցին ազգային-կուլտուրական ինքնավարության կամ դաշնության բանաձևերը: Մրանք էլ իրենց հերթին անընդունելի էին բոլշևիկյան գաղափարախոսների համար:

Ազգային հարցի լուծման հակադիր տեսակետների պայքարը շարունակվում է մինչ օրս: Այն 20-րդ դարասկզբին ձևավորված աշխարհաքաղաքական պատկերի տրամաբանական շարունակությունն է: Այս համատեքստում առավել քան կարևոր են դառնում նախորդ դարասկզբին խնդրի լուծմանը վերաբերող լայնորեն տարածված տեսակետների քննությունը և վերաարժևորումը: Ազգային հարցի լուծման գործում որոշիչ է «ազգ» հասկացությունը, որի վերաբերյալ առկա է երկու մոտեցում՝ *կառուցողական* և *ասպակառուցողական*: Վերջինս առավելապես բնորոշ է հարցի առնչությամբ մարքսիստական դիրքորոշմանը, որն աչքի է ընկնում ազգի լինելիության հանդեպ բացասական վերաբերմունքով՝ կանխատեսելով ազգի վերացում սոցիալիստական հասարակարգի հաստատման միջոցով: Կառուցողական մոտեցման շրջանակներում եվրոպական սոցիալ-փիլիսոփայական մտքի համատեքստում առավել տարածում են գտել երեք հիմնական ուղղություն-

¹ Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, 55 հատորով, հ. 25, Եր., 1980, էջ 311:

ներ՝ 1. *բնապաշտական*, 2. *մոդեռնիստական* և 3. *էթնոսիմվոլիստական*: Բնապաշտական ուղղության կողմնակիցները (Վ. Մյուլման, Յու. Բրոմլեյ, Լ. Գումիլյով) ազգությունը համարում են մարդու բնական հատկանիշ, իսկ ազգը՝ անհիշելի ժամանակներից գոյություն ունեցող երևույթ: Մոդեռնիստական ուղղության մեջ ազգը և ազգությունը դիտվում են իբրև ժամանակակից կատեգորիաներ, որոնք ձևավորվել են 1789 թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո: Ընդ որում՝ այս ուղղության ներկայացուցիչները ազգի ձևավորման հիմքում դնում են տարբեր գործոններ, ինչպես օրինակ՝ տնտեսական (Տ. Նեյրն, Մ. Հեթչեր), քաղաքական (Ջ. Բրոյնի, Պ. Բրաս, Է. Հոբսբաում) և սոցիոմշակութային (Է. Գելներ, Բ. Անդերսոն, Մ. Խրոխ): Էթնոսիմվոլիստական ուղղության ներկայացուցիչները (Ջ. Արմսթրոնգ, Է. Սմիթ, Ջ. Հաթչինսոն) փորձում են ձևավորել նախորդ երկու ուղղությունների փոխզիջումային տարբերակը՝ ազգի առաջացումը պայմանավորելով տվյալ հանրության համեմատաբար հին պատմությամբ և ազգային ինքնագիտացությամբ:

Ազգի ծագման և ազգային հարցի լուծման առնչությամբ սկիզբ առած բուռն քննարկումների գործընթացից անմասն չի մնացել նաև 20-րդ դարասկզբի արևելահայ հասարակական-քաղաքական միտքը, որ առավելապես ռուսական իրադարձությունների ազդեցության տակ էր: Խնդրի լուծումն առավել հրատապ էր Անդրկովկասում տվյալ ժամանակահատվածում առկա ազգամիջյան սուր բախումների պատճառով: Այն այսօր էլ չի կորցրել իր հրատապությունը, քանի որ տարածաշրջանն այսօր էլ շարունակում է մնալ աշխարհի թեժ կետերից մեկը՝ ի դեմս նաև Ղարաբաղյան հիմնահարցի, որ սաղմնավորվել է դեռևս անցյալ դարասկզբին: Այս տեսանկյունից 20-րդ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների մոտեցումների քննությունն առավել կարևոր է դառնում: Նշենք, որ 20-րդ դարասկզբին հայ մտքի տեսաբանները ազգին և ազգայինին վերաբերող խնդիրներում ունեին ուրույն, շատ հաճախ միմյանց հակադրվող դիրքորոշումներ, որոնց համապատասխան տվյալ պատմական իրավիճակում առաջադրում էին ազգային հարցի իրենց լուծումը՝ սահմանափակվելով տեսական դրույթների ձևակերպմամբ, որոնք պատմական-քաղաքական իրավիճակի պատճառով, ցավոք, զուրկ էին կենսագործման հնարավորությունից:

Դեռևս 1906 թ. «Կայծի» համարներում լույս է տեսնում Ստ. Շահումյանի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» ծավալուն հոդվածը, որում անդրադառնալով ազգի սահմանման խնդրին՝ նա նշում է. «...ներկա պատմական շրջանում ընդհանրապես *ազգություն* գաղափարը՝ նեղ զուտ բնական իմաստով վերցրած, նույնանում է ազգություն-հասարակական գաղափարի, կամ ազգություն-պետություն գա-

ղափարի հետ»²: Այսպիսով, հայ մարքսիստների կողմից ազգությունը նույնացվում էր պետության հետ՝ անտեսելով ազգություն-հայրենիք բաղկացուցիչը, ինչը անմիջականորեն հանգեցնում էր անհայրենիք միատարր «կոմունիստական ազգության» ձևավորման գաղափարին, որ ազգային հարցի լուծումը ենթադրում էր ազգության վերացմամբ: Այլ էին մյուս հասարակական-քաղաքական հոսանքների ներկայացուցիչների տեսակետները: 1907 թ. Ն. Յ. Դաշնակցության ներկայացուցիչ Գ. Խաժակը իբրև ազգային հարցի լուծման լավագույն տարբերակ առաջադրում էր դաշնության գաղափարը՝ այն հակադրելով ազգային ինքնորոշման իրավունքի մարքսիստական պահանջին³: Ազգային հարցին ծավալուն հողվածով հանգամանորեն անդրադարձել է նաև Դ. Անանունը 1913 թ.: Նա առաջադրում էր ազգային-կուլտուրական ինքնավարության գաղափարը⁴:

Տեսակետների այսօրինակ բազմազանությունը հանգեցնում էր գաղափարական թեժ բանավեճերի, որոնց ակտիվ մասնակիցներից էր հայ մարքսիզմի տեսաբան Ալ. Մյասնիկյանը, որը մեծ դերակատարում ունեցավ անցած դարասկզբին Չանգեզուրը Արևելյան Հայաստանի կազմում ներառելու գործում: Ինչ վերաբերում է Լեոնային Ղարաբաղին, ապա հարկ է նշել, որ 1921 թ. հունիսի 17-ին Ալեքսանդր Մյասնիկյանը ՀԽՍՀ կառավարության անունից Լեոնային Ղարաբաղը հռչակել էր Հայաստանի անբաժանելի մաս: 1921 թ. հուլիսին Թիֆլիսում գումարված Կոմբյուրոյի տխրահռչակ նիստում Մյասնիկյանը գրեթե միակն էր, որ Արցախի ճակատագիրը որոշելու հարցում լրջորեն ընդդիմացավ Ստալինին, թեև նրա ջանքերը, ցավոք, մնացին ապարդյուն: Սակայն հենց նույն Մյասնիկյանի ջանքերով Ադրբեջանը ստիպված եղավ 1923 թ. հուլիսի 7-ին Լեոնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ շնորհել:

Խնդրո առարկա հարցի լուծման մյասնիկյանական հայեցակետն անհրաժեշտ է դիտարկել երկու հարթությունում՝ **ընդհանուր** և **մասնավոր**: Առաջինի պարագայում Մյասնիկյանը ելնում էր ազգային հարցի լուծման մարքսիստական դիրքորոշումից, ըստ որի՝ միակ հնարավոր ճանապարհ էր համարվում ազգերի ձուլումը մեկ ընդհանուր անհայրենիք միավորի մեջ՝ դրանց կենտրոնացման ճանապարհով:

Ազգային հարցի լուծման մասնավոր հայեցակետի պարագայում Մյասնիկյանի ծավալած գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական փուլի՝ **տեսական-հրապարակախոսական** (Ժամանակագրական առումով այս փուլն ընդգրկում է Մյասնիկ-

² Մտ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, 5 հատորով, հ. 1, Եր., 1975, էջ 241-242:

³ Տե՛ս Գ. Խաժակ, Դեպի Ֆեդերացիա, Թիֆլիս, 1907:

⁴ Տե՛ս Դ. Անանուն, Ազգային հարցը և դեմոկրատիան, «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, №№ 1-2:

յանի հասարակական-քաղաքական գործունեության մինչհայաստանյան շրջանը՝ 1921 թ. մայիսը), երբ խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերն առավելապես դրսևորվում էին հրապարակախոսական նյութերի մշակմամբ, քաղաքական այս կամ այն հոսանքի առաջադրած տարբերակների վերլուծությամբ և քննադատությամբ, և **գործնական** (այս փուլը ներառում է Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության հայաստանյան շրջանը՝ սկսած 1921 թ. մայիսից մինչ 1925 թ. մարտը՝ նրա ողբերգական վախճանը), երբ Մյասնիկյանին կուսակցական առաջադրանք էր տրված՝ կարգավորել ազգամիջյան հարաբերությունները սկզբում Հայաստանում, այնուհետև նաև Անդրկովկասում՝ ապահովելով տարածաշրջանի հետագա խաղաղ զարգացումը: Նշենք, որ Մյասնիկյանն ազգային հարցի լուծման փնտրտուքները սկսել էր դեռևս 1913 թվականից՝ հանգամանորեն անդրադառնալով ժամանակի ռուս և հայ իրականության մեջ ազգային հարցի ծագման խնդրին և նրա բնույթին, դրա լուծման ուղղությամբ հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների ձեռնարկած քայլերին՝ քննադատելով այդ գործընթացում ազգայնականության ցանկացած դրսևորում⁵: Վստահությամբ կարող ենք ասել, որ ազգային հարցի լուծման առնչությամբ Ալ. Մյասնիկյանի մոտեցումներն այսօր էլ արդիական են, հետևաբար կարիք ունեն առանձին քննության և վերաբերման:

Մյասնիկյանն ազգային հարցի լուծման իր հայեցակետը ներկայացնում է տվյալ ժամանակահատվածի հասարակական-քաղաքական մտքի համատեքստում՝ խնդրո առարկայի առնչությամբ առկա գաղափարական հակադրությունների հենքի վրա՝ վերլուծելով ազգային հարցի լուծման՝ այդ շրջանում ամենից շատ քննարկման առարկա դարձած չորս հիմնական տարբերակներ՝ ֆեդերացիա (դաշնություն), ավտոնոմիա (ինքնավարություն), տեղական ինքնավարություն և ազգային ինքնորոշում:

Դաշնության՝ իբրև ազգային հարցի լուծման տարբերակի խնդրում Մյասնիկյանը հակադրվում էր Հ. Յ. Դաշնակցության գաղափարախոսներին: Վերջիններս գտնում էին, որ կենտրոնացման դեպքում առկա է բյուրոկրատիա, իսկ ապակենտրոնացման դեպքում՝ ռամկավարություն: Դաշնությունը ժխտում է կենտրոնացումը, հետևաբար նաև բյուրոկրատիան: Այսօրինակ մոտեցումը Մյասնիկյանի կողմից քննադատության է արժանանում: Դաշնությունն այսպես մեկնաբանողներին անվանելով պետական իրավունքի տարրական

⁵ Տե՛ս **Ալ. Մյասնիկյան**, Ազգային հարցի առթիվ, Մոսկվա, 1919: Նշենք, որ այս գրքույկում ներառված են Մյասնիկյանի՝ ազգային հարցին առնչվող երկու հոդվածներ, որոնցից «Ազգային հարցի առթիվ» վերտառությամբ հոդվածը տպագրվել էր դեռևս 1913 թ. («Մշակ», №№ 252-256), իսկ «Ազգային հարցի մոտիկ անցյալից Ռուսաստանում» հոդվածը՝ 1914 թ. («Մշակ», № 134):

սկզբունքներին անձանոթ մարդիկ՝ Մյասնիկյանը նշում է, որ «դժվար է հասկանալ, թե ինչ անմիջական կապ կարող է գոյություն ունենալ ֆեդերացիայի և ապակենտրոնացման մեջ: Մեկը բառի ընդարձակ իմաստով կառավարական ձև է, մյուսը պետական վարչական որոշ սիստեմ է»⁶: Առանձնացնելով կենտրոնացման և ապակենտրոնացման երկու տեսակ՝ օրենսդրական կամ քաղաքական ու վարչական՝ Մյասնիկյանը նշում է, որ քաղաքական ապակենտրոնացման հետ միասին միևնույն երկրի ներսում կարող է լինել վարչական կենտրոնացում, և հակառակը: Հենց դաշնության դեպքում է առկա քաղաքական ապակենտրոնացում, որի կողքին կարող է լինել վարչական կենտրոնացում, այսինքն՝ բյուրոկրատիա: Երբ երկրի քաղաքական կազմը կենտրոնացած է, ապա այստեղ չկա դաշնություն, պետությունը կենտրոնացած քաղաքական մարմին է, որի վարչական ձևը ապակենտրոնական է, այսինքն՝ չկա բյուրակրատիա: Փաստորեն, Մյասնիկյանը դաշնությունը չի ընդունում իբրև ազգային հարցի լուծման ընդունելի ձև, քանի որ դաշնության, այն է՝ քաղաքական ապակենտրոնացման դեպքում բյուրոկրատիայի խնդիրը չի լուծվում: Մերժելով դաշնության հանդեպ Մյասնիկյանի դիրքորոշումը՝ դաշնակցության գաղափարախոսները հակադարձում են նրան՝ նշելով. «...պատմական բազմաթիւ փորձերը ցոյց են տւել, որ լոկ վարչական ապակենտրոնացումը չէ օգնում, նա բաւարարութիւն չէ տալիս այն խոր պահանջներին, որոնք առաջանում են տնտեսական, ազգային, պատմական ու սօցիալական զանազանակերպ շահերից ու պայմաններից»⁷: Այսպիսով, դաշնակցության ներկայացուցիչները պահանջում էին ազգային հարցը լուծել դաշնության օգնությամբ, մինչդեռ Մյասնիկյանը նշում է, որ ոչ մի ազգ տվյալ պատմական ժամանակաշրջանում ամբողջովին որոշակի տարածքի վրա կենտրոնացած չէ, տնտեսական կյանքը ազգի ներկայացուցիչներին տարբեր ազգերի տարածքներում է վերաբնակեցնում, իսկ դաշնության հաստատման դեպքում տվյալ տարածքում բնակվող ազգային մեծամասնությունը կճնշի միևնույն տարածքում վերաբնակեցված ազգային փոքրամասնությանը: Հետևաբար, դաշնությունն ազգային հարցի լուծում չէ, դեռ ավելին՝ «ֆեդերացիան, ազգային հարցը չլուծելով հանդերձ, պետության շահերին վնաս է հասցնում»⁸: Ինչպես տեսնում ենք, ազգային հարցի լուծման տեսական-հրապարակախոսական փուլում Մյասնիկյանը դեմ է արտահայտվում խնդիրը դաշնության միջոցով լուծելուն, սակայն ավելի ուշ՝ արդեն գործնական փուլում Մյասնիկյանը ազգային հարցը փորձում է լուծել հենց դաշնության միջոցով: Ո՞րն էր նմանօրինակ կտրուկ շրջադարձի պատճառը: Մյասնիկյանի գաղա-

⁶ Ալ. Մյասնիկյան, Երկեր, հ. 1, Եր., 1984, էջ 205:

⁷ Գ. Խաժակ, նշվ. աշխ., էջ 114:

⁸ Ալ. Մյասնիկյան, Երկեր, հ. 1, էջ 210:

փարական շրջադարձերի գլխավոր «մեղավորը» Անդրկովկասում, մասնավորապես՝ Հայաստանում տիրող իրավիճակն էր թերևս, որ բնավ չէր տեղավորվում Մյասնիկյանի տեսական համոզմունքների շրջանակում, ավելին՝ պահանջում էր այդ համոզմունքները փոխակերպել առկա իրավիճակին համահունչ լուծումներով՝ դրանք ծառայեցնելով Անդրկովկասում ազգամիջյան բախումների վերացմանը:

Այնուհետև Մյասնիկյանը քննության է առնում ազգային հարցի լուծման խնդրում ինքնավարության պահանջը: «Ավտոնոմ կազմ ունեցող վայրը ղեկավարվում է իր սեփական օրենսդրությամբ (ինչպես և վարչական մեխանիզմով), որը, սակայն, չպետք է հակասե համապետական օրենսդրությանը. նա չի կարող ունենալ իր սահմանադիր ժողովը, ուստի և սահմանադրությունը»⁹: Եթե դաշնությունն անպայման պայմանավորված է տարածքով, ապա ինքնավարությունը կարող է դրա հետ կապված չլինել: Ինքնավարությունը կարող է լինել հողային, ազգային կամ քաղաքական, ազգային-կուլտուրական, խառը: «Հողային ավտոնոմիան մեղմացած ֆեդերացիա է, և նրա պակասությունները նույնն են, ինչ և ֆեդերացիայինը, սակայն ավելի նվազ չափերով, այդ է պատճառը, որ այսօր նույնիսկ մարքսիստներից ոմանք, որպես երկու չարյաց փոքրագույնը, Ռուսաստանում դնում են հողային կամ, մինչև նույն էր, շրջանային ավտոնոմիայի պահանջը»¹⁰: Հողային ինքնավարության պահանջը Մյասնիկյանը համարում է անհիմն: Այս պահանջն առաջադրողները փորձում էին որոշ զիջումներ կատարել դաշնության կամ ազգային ու ազգային-կուլտուրական ինքնավարության կողմնակիցներին: Ազգային կամ քաղաքական ինքնավարության դեպքում հիմքում դրվում է ոչ թե տարածքի, այլ ազգային պատկանելության փաստը, երբ նույն պետության մեջ նույն ազգության մարդիկ համախմբվում են՝ իրենց պահանջներն առաջ տանելու համար: Մյասնիկյանը կարծում է, որ ազգային ինքնավարության պահանջը բխում է դրա հեղինակների կողմից ազգին տրվող սահմանումից, ըստ որի՝ ազգը դիտվում է իբրև միատեսակ մտածող և խոսող մարդկանց խումբ: Այստեղ որոշիչ գործոնը ոչ թե տարածքի, այլ մշակույթի, լեզվի և հոգեբանության ընդհանրությունն է, որը, ըստ Մյասնիկյանի, այլևս չկա. այն փոխարինվել է դասակարգային հոգեբանությամբ, իսկ ցեղային, ազգային շարժումները վերածվել են դասակարգայինի: Այսպիսով, Մյասնիկյանը մերժում է ամեն տեսակի ազգային գոյությունը: Եթե այդպես է, եթե չկա ազգ, ապա ինչպե՞ս է նա բնութագրում հենց նույն Անդրկովկասում տվյալ պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները: Արդյոք դրանք սոսկ դասակարգային շարժման դրսևորումներ էին, թե՞ իրականում անդրկովկասյան ժողովուրդ-

⁹ Նույն տեղում, էջ 211:

¹⁰ Նույն տեղում:

ները պայքարում էին այս արևի տակ իբրև ազգ իրենց տեղն ունենալու և հետագա լինելիությունը ապահովելու համար: Ինչո՞վ է պայմանավորված Մյասնիկյանի այսօրինակ բացասական վերաբերմունքը ազգի և ազգայինի հանդեպ: Այս առումով շատ դիպուկ է հարցի առնչությամբ Հր. Միրզոյանի և Ն. Գոնչարի՝ հայ կոմունիստներին տրված բնութագրումը, համաձայն որի՝ «...մինչ Հայաստանի խորհրդայնացումը հայ կոմունիստները անվերապահորեն հավատում էին կոմունիստական շարժման, համաշխարհային հեղափոխության գաղափարներին, նույնիսկ թուրքական հեղափոխության առաջադիմականությանը, նրանցից շատերը պատրաստ էին զոհաբերել ազգային շահերը հանուն այդ գաղափարների հաղթանակի, ոմանք դրա համար նույնիսկ գործնական քայլեր կատարեցին»¹¹: Ուրեմն՝ մարքսիզմի առաջադրած սոցիալիստական գաղափարները, որ մարդկային կատարյալ համակեցություն էին ուրվագծում, որոնց իրականացման հնարավորությունը, սակայն, մշուշոտ ապագայի գործ էր, Մյասնիկյանի համար շատ ավելի ընդունելի էին ու գայթակղիչ, քան ազգերը՝ իրենց խնդիրներով և դրանց անհրաժեշտ լուծումներով: Այնուհանդերձ, արդարության դեմ չմեղանչելու համար հարկ է փաստել, որ իր գործունեության գործնական փուլում Մյասնիկյանը փորձեց համատեղել մարքսիզմի գաղափարախոսությունը և ազգայինի պահանջները, որն էլ թերևս պատճառը դարձավ նրա ողբերգական վախճանի:

Ինքնավարության հաջորդ ձևը, որ քննության է առնում Մյասնիկյանը, ազգային-կուլտուրական ինքնավարությունն է, որի պահանջով հանդես էր գալիս մարքսիստների մենշևիկյան թևը՝ հիմք ունենալով ավստրոմարքսիզմի տեսաբաններ Օ. Բաուերի, Կ. Ռենների և մյուսների մշակած տեսությունը¹²: Ռուս իրականության մեջ բաուերյան կուլտուր-ազգային ինքնավարության կողմնակիցներն էին էսեռները, ժողովրդական սոցիալիստները, որոնց բոլշևիկները համարում էին մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ և համոզված էին, որ նրանց առաջարկած կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը, այսինքն՝ ազգային հարցի լուծման նրանց տարբերակը, ստեղծում էր միայն արմատականության խաբկանք, իրականում մաքուր ռեֆորմիզմ էր և վերջին հաշվով աշխատում էր ազգայնականության օգտին¹³: Հայ իրականության մեջ բաուերյան տեսության կողմնակիցներ էին Դ. Անանունը, Բ. Իշխանյանը և այլք, որոնք նույնպես ազգային հարցի լուծումը պայմանավորում էին սոցիալիզմի հաստատմամբ, որը, սակայն, դեռ ապագա-

¹¹ Мирзоян Г., Гончар Н. Почему суд по факту геноцида армян Турция призывает доверять историкам. Ер., 2012, с. 46.

¹² Տե՛ս Զ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 4, Եր., 1965, էջ 237:

¹³ Տե՛ս «Национальный вопрос в дореволюционной России и его решение после Великой Октябрьской социалистической революции». М., 1984, էջ 62:

յի հարց էր: «Եթէ պրօլետարիատի դասակարգային կուսակցութիւնը աննախատեսելի ապագայի է վերապահում առհասարակ ազգային հարցի վախճանական լուծումը, ապա այդ չի նշանակում, որ նա ձեռնպահ է այդ խնդրի սահմանում առաջացած բարդ երեւոյթների նկատմամբ եւ չունի իր այժմեական գործնական քաղաքականութիւնը»¹⁴: Կուլտուր-ազգային ինքնավարութեան պահանջը հիմնավորելու համար Գ. Անանունը քննութեան էր առնում բարդ և պարզ դասակարգային կառուցվածք ունեցող ազգութիւնները: Երկրորդի պարագայում ազգի միասնութիւնն ապահովելը հեշտ է, քանի որ այստեղ շահերի բախումները հասցված են նվազագույնի: Այլ է իրավիճակը բարդ դասակարգային կառուցվածք ունեցող ազգերում: «Այստեղ շատ յաճախ ազգովին գործելու առիթներ չկան, որովհետեւ ազգային համարած բարիքը տարբեր բացատրութիւններ, տարբեր ձգտումներ է պարունակում իր մէջ: Եւ այն, ինչ մի դասակարգի համար ընդունուում է միանգամայն անտարակուսելի ազգային խնդիր, որի համար պէտք է, որ ծառանայ իւրաքանչիւր սուեալ ազգի անդամ, հանդիպում է միւս դասակարգի անտարբերութեան եւ լռութեան...»¹⁵: Եթէ նման ազգի շրջանակներում համաձայնություն կա, ապա դա արդյունք է մի դասակարգը մեկ այլ դասակարգի հպատակվելու: Սակայն, ըստ Անանունի, պէտք է կարողանալ այնպէս անել, որ ազգի շահերը համընկնեն ժողովրդավարութեան, ասել է թէ՛ ժողովրդի շահերին, որը հենց ազգութեան մէջ ազգային մեծամասնություն է: Ինչ վերաբերում է կուլտուր-ազգային ինքնավարութեան ուստպիական լինելուն, ապա Անանունը նշում է. «Մեզ թուում է, որ ուստպիական ոչինչ չկայ ազգային-կուլտուրական աստուծոմիայի գաղափարի մէջ, որ իւրաքանչիւր ազգութիւնների պետութեան մէջ նա ազգային հարցի լուծման լաւագույն միջոցն է: Մասնավորապէս Անդրկովկասի համար նա միակ համադարմանն է, որ կարող է հաշտեցնել ազգերին, թուլացնել ազգային կոփիւր»¹⁶: Մասնիկյանը քննադատում է այս դրույթը՝ ընդգծելով, որ ազգային-կուլտուրական ինքնավարութեան կողմնակիցները իրենց հովանավորութեան տակ են առնում բոլոր ազգային առանձնահատկութիւնները՝ կենտրոնանալով դրանց միայն դրական կողմերի վրա և անտեսելով դրանց հնարավոր բացասական հետևանքները: Ազգային-կուլտուրական ինքնավարությունը նպաստում է անջատողականութեանը՝ խոչընդոտելով ժողովրդական շարժման առաջընթացը: Հետևաբար, ազգային-կուլտուրական ինքնավարությունը ևս, ըստ Մասնիկյանի, ազգային հարցի լուծման ընդունելի ձև չէ: Ինչ վերաբերում է խառը ինքնավարութեանը, ապա սա վերը նշված տարբերակների համադրութիւնն է, որը ևս Մասնիկյանի հա-

¹⁴ Գ. Իշխանեան, Ազգային պրոգրեսը եւ դասակարգային շահերը, Թիֆլիս, 1908, էջ 268:

¹⁵ Գ. Անանուն, նշվ. աշխ., «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, № 1, էջ 144:

¹⁶ Նույն տեղում, № 2, էջ 366:

մար ընդունելի տարբերակ չէ: Ակնհայտ է, որ այստեղ նույնպես Մյասնիկյանը նախապատվությունը տալիս է վերը նշված մարքսիստական գաղափարներին՝ քննադատելով ազգայինի պահպանմանն ուղղված ամեն մի փորձ: Մինչդեռ հակառակ դիրքորոշումն ունենալու դեպքում Մյասնիկյանը մասնավորապես, իսկ հայ կոմունիստներն ընդհանրապես կարող էին խուսափել հայ ժողովրդի պատմության տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած ողբերգական մի շարք անցքերից:

Ազգային հարցի լուծման նշված տարբերակներին Մյասնիկյանը հակադրում է իր տեսակետը, որ բխում էր նրա կուսակցական-քաղաքական պատկանելությունից և վերաբանաձևում էր ՌՄԴԲԿ առաջնորդի դրույթը՝ նշելով, որ ազգային ինքնորոշման իրավունքի կիրառումը «նշանակում է ազատ պետության սահմաններում ապրող յուրաքանչյուր ազգի կողմից իր բախտի ազատ տնօրինում. այդ իրավունքը տարածվում է, իհարկե, նաև պետությունից տվյալ ազգի լրիվ անջատման վրա»¹⁷: Հայ հասարակական-քաղաքական մտքի տեսաբանները ևս ազգային ինքնորոշման իրավունքի պահանջը քննադատության ենթարկեցին: Դ. Անանունը մասնավորապես այն համոզմանն էր, որ դա ձևական ծրագրային կետ է Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ազգերի համար, որոնց մնում է բավարարվել տեղական ինքնավարությամբ, որը կոչված է բարեկարգելու ինչ-որ տարածք և ոչ թե լուծելու ազգային հարցը: Ազգային հարցի այսօրինակ լուծման դեմ հանդես եկավ նաև Հ. Յ. Դաշնակցությունը՝ ասելով. «Ռ. Ս. Դ. Բ. կուսակցությունը... երբեք չի ուզում իր ծրագրի «ազգերի ինքնորոշում» ոչինչ չարտայայտող կետը մշակել և տեղը որևէ խելքը գլխին, ըմբռնելի ու պարզ պահանջ դնել: Կարծես նա վախենում է ուսուցչի թողած ժառանգությունից մի մազաչափ հեռանալ: Նրա ծրագիրը մնացել է գերմանական ս. դ. դեմոկրատիայի հնաւանդ ծրագիրը»¹⁸: Փորձենք խնդիրը մասնավորեցնել հայ ժողովրդի օրինակով: Արդյո՞ք 20-րդ դարասկզբին հայ ժողովրդին պատուհասած իրադարձություններն ու դրանց պատճառով ստեղծված իրավիճակը տեղ էին թողնում ազգային ինքնորոշման իրավունքով հարցը լուծելու համար: Ազգային ինքնորոշման իրավունքի պահանջը հարցի կատարյալ լուծում էր թվում գուտ մտային մակարդակում, սակայն այն ուներ նաև հեռահար, խորքային հնարավորություններ: Առանց դրանց բացահայտման բնականաբար անհնար է ճիշտ գնահատել այն: Ակնհայտ է, որ մասնատված հայկական տարածքների և գաղթական դարձած մի ողջ ազգի համար սա չէր կարող փրկության ելք լինել:

Մյասնիկյանի համար որքան էլ անընդունելի թվար իր գաղափարական հակառակորդների կողմից ազգերի ինքնորոշման պահանջի

¹⁷ Ալ. Մյասնիկյան, Երկեր, հ. 1, էջ 348:

¹⁸ Գ. Խաժակ, Ի՞նչ է ազգությունը, Կ. Պոլիս, 1912, էջ 124:

քննադատությունը, այնուհանդերձ իր հասարակական-քաղաքական գործունեության ոլորտում, որ սկսվեց 1921 թ. մայիսին Հայաստան գործուղմամբ, նա ստիպված էր վերանայել իր դիրքորոշումը, քանի որ անդրկովկասյան տարածաշրջանում առկա իրավիճակը պահանջում էր հարցի լուծում ոչ թե զուտ տեսական մակարդակում՝ ազգային ինքնորոշման պահանջի ծրագրային կետի առաջադրմամբ ու քարոզմամբ, այլ գործնական քայլերի ձեռնարկում, որոնք կրխեին իրավիճակի սթափ և ճշգրիտ գնահատումից: Ինքը՝ Մյասնիկյանը, այսպես է բնորոշում ազգային հարցն Անդրկովկասում. «...ամենամեծ չափով ազգային հարցն այն է, որ կարողանանք վերացնել ազգային նախապաշարունները կամ ազգային այն կանխահամոզումները, թե այս կամ այն ազգությունը վատն է կամ լավը: Հարկավոր է այդ կանխակալ կարծիքից միանգամ ընդմիշտ հրաժարվել և ինքներս մեզ ասել, որ մեր մեջ, մեր ներսում ազգություն չկա, մենք մի ազգություն ենք - կոմունիստական ազգություն»¹⁹, որի ձևավորման լավագույն տարբերակը Մյասնիկյանը համարում էր Անդրկովկասի երեք հանրապետությունների դաշնության ձևավորումը: Քաղաքական-տնտեսական և վարչակազմակերպչական առումով, ըստ Մյասնիկյանի, Անդրկովկասյան դաշնության ստեղծումն անհրաժեշտ էր և նպատակահարմար, քանի որ միջազգային քաղաքականության տեսանկյունից անդրկովկասյան խորհրդային երեք պետությունները՝ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, հավասար պայմաններում էին: Փաստորեն, Մյասնիկյանն ազգային հարցի լուծման համար առաջ էր քաշում անդրկովկասյան ժողովուրդների համագործակցության և իբրև դրա անմիջական հետևանք՝ նրանց համերաշխ գոյակցության պահանջը, որը, կարծում ենք, ենթատեքստում հայ ազգի փրկության միտումն ուներ:

Այսպիսով, ազգային հարցի լուծման մյասնիկյանական հայեցակետը դիտարկվում է երկու հարթություններում՝ **ընդհանուր** և **մասնավոր**: Առաջինը, որ ազգային հարցի լուծման մարքսիստական դիրքորոշումն էր, հարցի լուծման միակ հնարավոր ճանապարհ էր համարում ազգերի ձուլումը մեկ ընդհանուր անհայրենիք միավորի մեջ՝ դրանց կենտրոնացման ճանապարհով: Սա, ըստ էության, համաշխարհային քաղաքականության մեջ ներկայումս շրջանառվող միաբնեռ մոդելի օրինակ էր: Ինչպես ցույց է տալիս ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը, ազգերը մի կողմից համախմբվում են ազգային պետության շուրջը, մյուս կողմից՝ ներգրավվում միջպետական կառույցներում՝ ազգային պետության անվտանգությունն ապահովելու նպատակով: Փաստորեն, այս երկու՝ առաջին հայացքից հակադիր թվացող գործընթացները հաջողությամբ համատեղվում են: Ազգային պետությունները միջպետական կառույցներում համախմբելու համար Մյասնիկյանի

¹⁹ Ալ. Մյասնիկյան, Երկեր, հ. 5, «Մուղնի», 2007, էջ 185:

այս մոտեցումը կարելի է դիտել նախատիպ-մոդել:

Ինչ վերաբերում է ազգային հարցի լուծման հայեցակետի մասնավոր տարբերակին, ապա այս դեպքում հարկ է առանձնացնել երկու հիմնական փուլ՝ *տեսական-հրապարակահոսական* և *գործնական*: Առաջին փուլում Մյասնիկյանը առաջ է քաշում ազգային ինքնորոշման իրավունքի պահանջը՝ զուգահեռաբար քննադատելով ազգային հարցի լուծման մյուս տեսակետները: Նշենք, որ ազգային ինքնորոշման իրավունքի պահանջը, որ 1945 թ. ամրագրվել է ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ, այսօր էլ լայնորեն քննարկվում է՝ հակադրվելով տարածքային ամբողջականության սկզբունքին: Այս համատեքստում Մյասնիկյանի առաջադրած դրույթները շարունակում են մնալ արդիական: Երկրորդ փուլում պատմական իրադարձությունների և իրականության թելադրած պահանջների ազդեցությամբ Մյասնիկյանը ազգային հարցին տալիս է իրավիճակային լուծում. ազգային ինքնորոշման իրավունքի պահանջի փոխարեն ներկայացնում էր դաշնություն ստեղծելու ու դրա գործառության հաջորդական քայլերի ծրագիր, որ անդրկովկասյան ազգերի միջև առկա ընդհարումներին հակադրում էր այդ ազգերի միասնականության ու համագործակցության սկզբունքը, որ կոչված էր Անդրկովկասը հանել փակուղուց: Այս դեպքում Մյասնիկյանի դիրքորոշումն առավելապես աղերավում է ժամանակակից սոցիալական փիլիսոփայության մեջ համաշխարհային քաղաքականության հանտինգտոնյան բազմաքաղաքակրթական մոդելի հետ, որը հանգում է պետությունների միջև առկա ընդհանրությունների հենքի վրա մարդկային հանրությունների կազմավորման գաղափարին:

Բանալի բառեր – *մարքսիզմ, ազգային հարց, դաշնություն, կուլտուր-ազգային ինքնավարություն, տեղական ինքնավարություն, ազգային ինքնորոշում, Անդրկովկասյան դաշնություն*

АРПИНЭ МЕЛКУМЯН – Национальный вопрос в теоретическом наследии Ал. Мясникяна. – Национальные противоречия и разногласия донныне остаются одним из нерешённых вопросов глобального масштаба. В начале XX в. этот вопрос с особой остротой стоял в многонациональной Российской империи, где разного рода интересы соседних народов нередко приводили к ожесточённым конфликтам и столкновениям. Актуальным и болезненным был он, в частности, на Кавказе, и поиски выхода из кризисных ситуаций порождали споры и дискуссии, которые вели между собой представители конкурирующих идеологий, партий и общественных движений. В статье разбирается позиция, которую занимал в этих дискуссиях выдающийся армянский общественно-политический деятель, теоретик марксизма и революционер Александр Мясникян. Его точка зрения на национальный вопрос сопоставляется с теоретическими воззрениями и практикой поборников других идейных направлений.

Ключевые слова: *марксизм, национальный вопрос, федерация, культурно-национальная автономия, национальное самоопределение, Закавказская Федерация*

ARPINE MELKUMYAN – *The National Question in Theoretical Heritage of Al. Miasnikyan.* – The national question was and still remains one of the unsolved problems on a global scale. It was much more vexed in Russia in the early 20th century, when Russian Empire turned into a community of more than one hundred nations, each of which put forward their demands, which often overlap with the requirements of other nations, leading to sharp ethnic conflicts. In the early 20th century this issue was no less acute and urgent in the Caucasus that gave rise to many disputes regarding solutions to the problem put forward by different ideologies and representatives of many social and political trends. This article is an attempt to present the point of view of prominent Armenian political figure of the early 20th century, Marxist theoretician Al. Miasnikyan regarding the national question comparing it with other theorists' decisions opposing social and political trends.

Key words: *Marxism, national question, federation, cultural-national autonomy, local autonomy, national self-determination, Transcaucasian Federation*

К ПРОБЛЕМЕ ДОМИНАНТ И ДЕТЕРМИНАНТ ОБЩЕСТВЕННОГО РАЗВИТИЯ

ВАРДГЕС ПОГОСЯН

Дело не в дорогах, которые мы выбираем, а в том,
что внутри нас заставляет выбирать наши дороги.

Уильям Сидни Портер (О. Генри)

Опыт изучения всемирной социальной истории позволяет выявить примеры успешных диффузионных межцивилизационных заимствований и ускоренных мобилизационно-модернизационных преобразований, позволивших конкретным обществам в кратчайшие сроки повысить свою жизнеспособность, противостоять рискам и вызовам эндогенного и экзогенного характера. Однако проблемность построения в течение 25 лет задекларированных постсоветскими реформаторами либерально-демократических обществ, функционирующих на рыночных основаниях, не только позволяет констатировать несоответствие теоретико-методологических принципов проводимых преобразований локальным условиям, но и ориентирует в рамках разрешения социологической проблемы на более адекватное, чем дихотомия «традиция – модернность», объяснение устойчивости подвергаемого реформированию институционального устройства.

Аналитический материал, представленный в настоящей статье, имеет целью путем сопряжения различных концепций, основанных на множественности культурно-исторических форм, и оперирования в рамках социологического теоретизирования методом импликаций выявить роль социокультурного компонента в общественном развитии, определить общие положения методологии преобразования конкретных обществ.

Обращение к специфике социокультурной динамики локальных обществ актуализирует вопрос о детерминирующих общественное развитие факторах, роли детерминант и доминант в процессах социальных изменений.

Многопараметрический анализ истории и современного состояния этого направления в социологическом теоретизировании дан в фундаментальном исследовании П. Штомпки «Социология социальных изменений». Морфогенетической альтернативой системной модели, согласно П. Штомпке, становится всепроникающая динамичность социальной реальности (процессуальность общества, процессуальность структур), и при этом конкретное общество рассматривается как полевая структура, непрерывный процесс, структурированный поток событий в рамках определенного социального поля¹.

В исследовании процессов изменений необходимо определить, что оста-

¹ См. Штомпка П. Социология социальных изменений. М., 1996, с. 25–26.

ется неизменным. Относительную неизменность через самоподдерживающуюся саморегулирующуюся уникальность отмечали цивилиологи (Н. Данилевский, О. Шпенглер, А. Тойнби), её доминированием социологи объясняли специфическое институциональное устройство (М. Вебер) и самоидентификацию (С. Хантингтон). «Неизменно-особое» стало основным препятствием практическому осуществлению в XX в. двух утопических конструкторов: построению всемирной социалистической системы и глобального масштаба вестернизированию посредством западнцентристской модернизации.

Современные научные представления о мире сопряжены с понятиями поливариантности, многообразия, отрицается фатальность и телеологическая конечная заданность, признается объективное существование альтернатив и возможность выбора, но выбор этот ограничен. Выделение и более внимательное рассмотрение в социальной динамике порождаемых самоорганизационной составляющей феноменов, изучение структуры как части системного пространства, элементного состава и соответствующих динамических связей поможет понять меру такой ограниченности.

Самоорганизация, согласно классической парадигме социального знания, происходит благодаря тому, что в процессе общения людей в группе возникают социальные регуляторы – «социальные факты» (по Э. Дюркгейму) в виде лидеров, субординации, распределения статусов и ролей, возникновения групповых ценностей и норм, группового мнения, социальных институтов, регулирующих деятельность и поведение людей. Этот набор базовых ценностей охраняется специальным социальным механизмом (по О. Конту) или регулятивной системой (по Г. Спенсеру), обеспечивающей социальный контроль. Относительно устойчивый социум существует при наличии социальных регуляторов в сочетании со сформировавшимися общими базовыми ценностями и соответствующими им социальными нормами, а также социального механизма, воспроизводящего эти ценности и нормы. Истоки же возникновения социальных институтов, по мнению П. Бергера и Т. Лукмана, нужно искать в физической природе человеческих существ. Стремление скоординировать социальную составляющую своей жизни есть антропологическая необходимость для успешного выживания: «Внутренняя нестабильность человеческого существования вынуждает его к тому, чтобы человек сам обеспечивал стабильное окружение для своего поведения. Человек должен сам классифицировать свои влечения и управлять ими. Эти биологические факторы выступают в качестве необходимых предпосылок создания социального порядка»².

Одной из особенностей институтов является их историчность. Институты не возникают одномоментно, для их создания процесс взаимных типизаций действий социальных акторов должен занять длительное время. Понять сущность конкретного института невозможно без изучения истории, продуктом которой он является. Согласно Э. Дюркгейму генетически общество возникает в результате взаимодействия индивидов, а возникнув, оно начинает жить по

² Бергер П., Лукман Т. Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. М., 1995, с. 89.

